# Ազգ

Azg

11 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 203 (4821)

ISSN: 1829-1651


# «Պատերազմ չէ, Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական լուծում ենք կամենում»

*Ասել է Արազ Ազիմովը՝ Հայաստանի հասցեին «ֆաշիստական» արտահայտությունը կիրառելով*

Բաքվի իշխանությունները տարածքային ամբողջականության տեսանկյունից են դիտում ԼՂ հակամարտության հարցը՝ պահանջելով իրենց հանձնել այժմ վիճարկվող տարածքը: ԵԱՀԿ-ում ունեցած զրույցից հետո Վիեննայում գտնվող Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը լրատվամիջոցներին ասել է, թե իր երկիրը պատերազմ չի ուզում, այլ՝ քաղաքական լուծում, նոյեմբերի 9-ին իրազեկում է «Թիրոլեր թագեսցայթունգը»: Մինսկի գործընթացի մասին ժխտական վերաբերմունք ունի՝ «որեւէ արդյունք չի տեսնում»: Ազիմովն ակնարկել է ադրբեջանցի 750 000 փախստականների ԼՂ վերադարձի մասին՝ հավելելով, թե «փոխզիջումային տարբերակ որեւէ դեպքում չի նշանակում տարածք զիջել Հայաստանին, այլ՝ երկու ազգերի համագոյակցություն»:

Անհամատեղելիության մասին խոսելը «ֆաշիստական» է, ասել է Ազիմովը՝ Հայաստանին նկատի ունենալով: «Ադրբեջանը պատերազմ չի ուզում», նորից շեշտել է փոխարտգործնախարարը: Ադրբեջանը պետք է ուժեղ բանակ ստեղծի, թեեւ քաղաքական լուծում է ցանկանում»: 3 միլիոն բնակչություն ունեցող Հայաստանը ավելի շատ՝ 71 000 զինուժ ունի, քան 8,6 միլիոնանոց Ադրբեջանը՝ 63 000, ասել է Ազիմովը:

Փոխարտգործնախարարը խոսել է նաեւ նավթի ու գազի պաշարների, դրանց շնորհիվ իր երկրի միջազգային դերակատար լինելու, տնտեսական աճի ու Հայաստանի տնտեսական վատագույն պայմանների պատճառով երկրից ու նույնիսկ ԼՂ-ից բնակչության մեծ չափերի արտագաղթի մասին: Հայ երիտասարդները երկրում հեռանկար չեն տեսնում, հաղորդել է ադրբեջանցի պաշտոնյան՝ եղածը «ազգային աղետ» որակելով: Ազիմովն ասել է, թե Բաքուն «բազմաբեւեռ արտաքին քաղաքականություն» է վարում, Թուրքիան տնտեսական եւ քաղաքական սերտ գործակից է, Ռուսաստանը ճանաչում է Ադրբեջանի կարեւոր դերը Հարավային Կովկասում: Ինչ վերաբերում է Իրանին, այնտեղ 30 միլիոն ազերի է ապրում՝ ասել է թե մոտավորապես 3 անգամ ավելի, քան Ադրբեջանում: Գործընկեր է նաեւ ԵՄ-ն:

Փոխարտգործնախարարը շեշտել է, թե իր երկիրը հոգ է տանում ռազմավարական գործընկերության մասին, բայց չի հանդուրժի արտերկրյա ռազմաբազաների ներկայությունն իր տարածքում: «Նաբուկկոյի» մասին զգուշավոր է արտահայտվել՝ հաջողություն կունենա, թե ոչ, եվրոպացիները գիտեն:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Գերմանիա

# Ե՞րբ, ի՞նչու եւ ի՞նչ պատճառով է գործարարը հայտնվում իշխանության մեջ

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**




Նախագահ Սարգսյանի՝ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների համագումարում ելույթի որոշ հատվածներ ակնհայտորեն քաղաքական ենթաիմաստներ էին պարունակում, եւ դա չվրիպեց մեկնաբանների աչքից: Նրանք արդեն երեկ գտան մի շարք թերասացություններ ու սկսեցին: Նախագահի այս ելույթից հասկանալի էր մի բան՝ սկսված պաշտոնանկությունների դադարը նախագահը դատարկ թողնել չի պատրաստվում եւ հասարակությանը հուշում է այն ուղղությունները, որոնցով շարժվելու է: Փաստորեն՝ նախագահի ակնարկած տնտեսական ուղղվածության անակնկալը՝ թե ինչ-որ մեծ ծրագիր է առաջարկվելու գործարարներին, չի կարող մեծ առումով քաղաքական նշանակություն չունենալ, եթե աշխատատեղ ու կայունություն է ապահովելու ներքին շուկայում, այլ խոսքով՝ մեր կյանքում դրական տեղաշարժ է լինելու: *Տես էջ 2*

# Երբ «եղբայրությունը փողով է չափվում»

«Մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսը թուրք եւ ադրբեջանցի պետական, քաղաքական եւ հանրային գործիչների շուրթերից հնչում է գրեթե ամեն օր: Երկու երկրներն իրոք սերտ համագործակցում են ամենատարբեր բնագավառներում: «Թուրքիան միակ միջնորդն է Ադրբեջանի եւ Արեւմուտքի հարաբերություններում»,- օրերս հայտարարել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի պատասխանատուներից Ալի Հասանովը: «Լեռնային Ղարաբաղի հարցը Թուրքիայի արնածորող վերքն է»,- Իզմիրում հյուրընկալելով Իլհամ Ալիեւին, ասել էր վարչապետ Էրդողանը:

Բայց, պարզվում է, խոսքից վեր կա իրականություն: Մասնավորապես, հայտնի է դարձել, որ Ադրբեջանում Վանի երկրաշարժից տուժածներին օգնության նախաձեռնություն է ծավալվել: Խոսքը հանրային օգնության մասին է: Եւ պաշտոնական տվյալներով առայսօր ադրբեջանական հանրությունն իր թուրք եղբայրներին օգնելու նպատակով հանգանակել է 7650 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը փոխանցվել է Թուրքիայի Կարմիր մահիկի կազմակերպության բանկային հաշվեհամարին:

Եթե յուրաքանչյուր ադրբեջանցի Վանի երկրաշարժից տուժածներին հատկացներ գոնե մեկ դոլար, ապա գումարը կկազմեր 9 միլիոն. պաշտոնական վիճակագրությունն Ադրբեջանի բնակչությունը հաշվում է 9 միլիոն: Ինչպես ցույց է տալիս հանգանակած գումարի չափը, ադրբեջանական հասարակությունը բացարձակ անտարբեր է գտնվել թուրք եղբայրների կարիքների հանդեպ: Նրա համար միեւնույն է, թե Վանում մարդիկ մնացել են անօթեւան, սննդի, հագուստի, դեղորայքի կարիք ունեն:

Իսկ դա վկայում է, որ երկու երկրների հասարակությունները չեն կիսում «եղբայրության» մասին իշխանությունների ճամարտակությունները: Ավելի ճիշտ, իշխանությունները ոչինչ չեն անում, որպեսզի իրենց «եղբայրությունը» հասնի հասարակությունների միջեւ փոխհարաբերություններին: Ինչն էլ իր հերթին մղում է ենթադրել, որ՝ կամ իշխանություններն ամենեւին էլ «եղբայր» չեն, կամ հասկանում են, որ հասարակությունները չեն ընդունում «եղբայրության» գաղափարը եւ չեն միջամտում նրանց «ներքին գործերին»:

Ո՞րն է ամենահավանականը: Դատողություններ, մանավանդ ենթադրություններ չանենք: Փաստը մնում է փաստ. Թուրքիայի աղետալի երկրաշարժից անցել է բավական երկար ժամանակ: Եւ այդ ընթացքում ադրբեջանական հասարակությունը կարող էր շատ ավելի ներշնչող ծավալի օգնություն ցուցաբերել տուժածներին: Դա չի արվել:

Ստացվում է, որ երբ «եղբայրությունը չափվում է փողով», ադրբեջանցիները գերադասում են դրամապանակները փակ պահել: Իսկ առհասարակ խոսել՝ կարելի՞ է: Այլ եզրահանգման տեղ չի մնում: Եթե, իհարկե, խնդիրը նրանում չէ, որ երկրաշարժը պատուհասել է Թուրքիայի հիմնականում քրդաբնակ շրջանները, եւ ադրբեջանական հասարակությունը քրդերին «եղբայր» չի ճանաչում: Իսկ դա արդեն այլ մտորումների թեմա է:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Դարձյալ երկրաշարժ Վանի շրջանում

Նոյեմբերի 9-ի երեկոյան Վանի շրջանում տեղի է ունեցել Ռիխտերի սանդղակով 5,6 բալ ուժգնության երկրաշարժ: Նախնական տեղեկությունների համաձայն, զոհվել է առնվազն 7 մարդ: Փլատակներից դուրս բերվածների թիվը 23 է: Տասնյակ մարդիկ մնում են փլատակներում, հաղորդում է newsru.co.il կայքէջը:

Փլուզված 25 շենքերի մեջ կա 2 հյուրանոց, որտեղ կենում էին աղետյալներին օգնող օտարերկրացիները: Հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած 7,2 մագնիտուդով երկրաշարժի հետեւանքով զոհվել են 604 եւ վիրավորվել 4100 անձինք: Այդ օրը մասնակիորեն ավերված բազմաթիվ շենքեր փլուզվել են նոյեմբերի 9-ի երկրաշարժից, որի էպիկենտրոնը գտնվում է Վան քաղաքից 16 կմ հարավ, 5 կմ խորության մեջ:

# Անշարժ գույքի գները սեպտեմբերին անփոփոխ են մնացել

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2011-ի սեպտեմբերին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15293 գործարք, ինչը 2,3 տոկոսով ցածր է նախորդ ամսվա՝ օգոստոսի համեմատ եւ 2,4 տոկոսով բարձր՝ 2010-ի սեպտեմբերի գործարքների քանակի համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը սեպտեմբերին օգոստոսի համեմատ աճել է 0,7 տոկոսով, իսկ անցյալ տարվա սեպտեմբերի համեմատ՝ 8,7 տոկոսով: 4412 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 77,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37,6 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում գործարքների 67,6 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2011-ի օգոստոսի համեմատ, սեպտեմբերին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 4,8 տոկոսով, իսկ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճել՝ 2,6 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա սեպտեմբերին օգոստոսի համեմատ գրեթե անփոփոխ են մնացել: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | սեպտեմբեր 2010թ. | սեպտեմբեր 2011թ. | օգոստոս 2011թ. |
| Կենտրոն | 455400 | 436200 | 438200 |
| Արաբկիր | 374800 | 337900 | 337800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 285700 | 265600 | 262900 |
| Նոր Նորք | 232300 | 222100 | 226600 |
| Ավան | 240600 | 250500 | 247400 |
| Էրեբունի | 245700 | 232100 | 234300 |
| Շենգավիթ | 247400 | 228900 | 223100 |
| Դավթաշեն | 272600 | 256300 | 258100 |
| Աջափնյակ | 232700 | 222800 | 221200 |
| Մալաթիա-Սեբաստիա | 237200 | 224500 | 227400 |
| Նուբարաշեն | 148100 | 144200 | 145400 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 270200 | 256500 | 256600 |

*Տես էջ 3*

# 800 հազար օսմանյան ոսկեդրամ շվեյցարական բանկերում

*Ո՞ւմ էր պատկանում, ինչպե՞ս է ձեռք բերվել այդ հարստությունը եւ ի՞նչ միջոցներով է Էլյազիգից փոխադրվել Շվեյցարիա*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Որքան էլ ժխտողականության հարցում թուրք հասարակությունը համերաշխ լինի թուրքական իշխանությունների հետ, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ամեն մի դրսեւորում հավասարակշռությունից հանում է թե՛ մեկին եւ թե՛ մյուսին: Հիվանդագին երեւակայությունը դառնում է նրանց բնորոշ գիծը: Դա պատահական չէ, այլ հանցագործի հոգեբանության հետեւանք, որովհետեւ ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքը բացառապես շրջափակված էր հայ ժողովրդի դահիճներով, իսկ ընչաքաղց թուրքական ժողովրդական զանգվածներն անմիջականորեն մասնակցել էին Հայոց ցեղասպանությանը: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցն ավելի է բորբոքում թուրքերի հիվանդագին երեւակայությունը, նրանք սկսում են ակտիվացնել հայկական դավադրության որոնումները:

Որոնումների պարագայում խոսքը էլյազիգցի գործարար Սաիդ Ալի Բայրաքի հոր շվեյցարական Credit Suisse բանկում պահվող 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին է: 6 տոննա կշռող այդ ոսկեդրամները բանկին են հանձնվել 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման նախօրեին, շվեյցարական բանկը հայտարարել է, որ ոսկիների աղբյուրն անհայտ է, խարդախության հոտ է փչում դրանից:

Սակայն Անկարայի համալսարանի պրոֆ. Չաղրը Էրհանը փոխանակ մտածելու, թե 6 տոննա քաշ ունեցող 800 հազար ոսկեդրամն ի՞նչ հանգամանքներում է հայտնվել էլյազիգցի գործարար Բայրաքի հոր ձեռքում, ինչո՞ւ եւ ի՞նչ միջոցներով ու ճանապարհով է հասել Շվեյցարիա, մտահոգություն է հայտնում, թե Բայրաքը որպես ժառանգ տարիներ շարունակ, պայքարելով հանդերձ, չի կարողանում բանկից ստանալ իր հոր ոսկիները, ապա եւ ավելացնում. «Հետաքրքրական է, «աղբյուրն անհայտ», այս ոսկիներից խարդախության հոտը փչելու մասին արտահայտվելիս, ի՞նչ նկատառումներով է առաջնորդվել շվեյցարական բանկը»:

Ի դեպ, էլյազիգի ոսկիների հարցը հոկտեմբերի 17-ի համարում արծարծվել էր «Միլլիեթ» թերթում: Համենայն դեպս, պրոֆ. Էրհանի «Թյուրքիե» թերթի նոյեմբերի 8-ի համարում հրապարակված հոդվածը, որն արտատպել է Ստամբուլի «Հայթերթ» կայքէջը, հետաքրքրական է: Ահա թե ինչ է գրել.

*Տես էջ 8*

# Ադրբեջանահայերը ցանկանում են Զանգելանում քաղաք հիմնադրել

Այսօր Ամերիկայի հայկական համագումարի երեւանյան գրասենյակում տեղի կունենա «Ադրբեջանահայ եւ նախիջեւանահայ փախստականների» նախաձեռնության երրորդ համագումարը: Հանդիպմանը նախաձեռնող խմբի անդամները ադրբեջանահայերին, միջազգային կազմակերպության ղեկավարներին եւ դեսպաններին կներկայացնեն ազատագրված տարածքում՝ Զանգելանում նոր քաղաքի հիմնադրման հարցը: Դրան զուգահեռ նրանք կներկայացնեն հռչակագիրը, որտեղ մասնանշված են փախստականների իրավունքները ու կպահանջեն ԵԱՀԿ-ի պետություններից ջանքեր գործադրել իրավունքների օրինական վերականգնման համար: Մինչ այդ՝ երեկ Հանրային խորհրդում կրոնի, սփյուռքի եւ միջազգային ինտեգրման հարցերի հանձնաժողովի նիստում նախաձեռնության հեղինակները ներկայացրին նոր քաղաքի հիմնադրման անհրաժեշտությունն ու նպատակը:

90-ականներին 100.000 ադրբեջանահայ ընտանիքներ դարձան փախստական: Կրկին ինտեգրվելու հնարավորություն նրանք չունեն: Պատճառն ադրբեջանական հասարակության ներկայիս վիճակն ու մարդու իրավունքների ոտնահարման բարձր սանդղակն է: «Սակայն դա չի նշանակում, որ ադրբեջանահայերը պետք է մոռանան իրենց իրավունքների եւ պահանջների մասին: 100.000 հայ ընտանիք է տուժել: Ադրբեջանը պետք է պատասխանատվություն կրի, որովհետեւ մենք հակամարտության հետ որեւէ կապ չենք ունեցել: Մենք չենք վերցրել զենք եւ կռվել նրանց դեմ: Մենք զոհեր ենք, էթնիկ զտման ենք ենթարկվել», ասում է նախաձեռնության անդամ իրավաբան **Անդրեաս Ղուկասյանը**: Նորակառույց քաղաքը 20.000 ընտանիքի համար է: Կառուցման համար անհրաժեշտ է 5 տարի եւ երեք միլիարդ դոլար:

Ղուկասյանն ընդգծում է, որ քաղաքը ստեղծվելու է ադրբեջանահայերի ուժերով եւ ֆինանսական աջակցությամբ: «Կան բազմաթիվ ադրբեջանահայեր, ովքեր արտասահմանում կարողացել են 20 տարվա ընթացքում ձեռնարկություններ հիմնել եւ համաձայն են ֆինանսապես աջակցել քաղաքի կառուցմանը: Այս քաղաքի կառուցմամբ Ադրբեջանին եւ ողջ աշխարհին կապացուցենք, որ հայը չի կոտրվել, ենթարկվել է ցեղասպանության, սակայն նոր կյանք է հիմնում», ասում է Ղուկասյանը՝ հավելելով, որ մի իրավունքի իրականացումը չի նշանակում հրաժարում այլ իրավունքներից:

Նախաձեռնության առաջնահերթ խնդիրներից է քաղաքի կառուցմանը զուգահեռ միջազգային տարբեր ատյաններում բարձրացնել ադրբեջանահայերի խնդիրները:

«Մեր իրավունքների մասին չի բարձրաձայնվել, որովհետեւ լիազոր մարմին չկար: Այսուհետեւ ՄԱԿ-ում եւ ԵԱՀԿ-ում կբարձրաձայնենք փախստականների հարցերն ու կպահանջենք պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին»:

Անդրեաս Ղուկասյանը շեշտում է, որ իրենց համար ընդունելի է ԼՂՀ սահմանադրությունը, սակայն եթե գա մի պահ, որ միջազգային հանրությունը ազատագրված տարածքները որակի «գրավյալ» եւ վերադարձնելու հարց ծագի, ապա կառուցվելիք քաղաքի վերադարձման հարց չի կարող առաջանալ: «Այնտեղ բնակվում են դիսկրիմինացիայի ենթարկված հազարավոր անձինք: Հետեւաբար միջազգային նորմերով այն համարվում է ոչ թե «գրավյալ», այլ «վիճելի» տարածք:

Ղուկասյանը հավաստիացնում է, որ Ադրբեջանն իր հերթին չի պահանջի քաղաք կառուցել Հայաստանից գաղթած ադրբեջանցի փախստականների համար: «Հայաստանում բնակվել է 32.000 ադրբեջանցի ընտանիք: 28.000-ը վաճառել է իր գույքը, 4.000-ի գույքը վնասվել է երկրաշարժի ժամանակ: Այդ ժամանակ Խորհրդային Հայաստանը 70 միլիոն ռուբլի հատկացրեց նրանց որպես փոխհատուցում: Հետեւաբար Հայաստանից փախած ադրբեջանցիները որեւէ պահանջ չեն կարող ներկայացնել», ասում է Ղուկասյանը:

Անդրադառնալով քաղաքի ֆինանսական ռեսուրսներին՝ իրավաբանը շեշտեց, որ քաղաքի զարգացման առաջին խնդիրը աշխատատեղերի բացումն է, ինչն իր հերթին ենթադրում է ներդրումներ: «Քաղաքն ազատ տնտեսական գոտի կլինի, բացի դրանից սահմանակից է Իրանին եւ նավթամշակման առումով կարող է լավ տարածք դառնալ»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻ

# Հայաստանի տրանսպորտային նախագծերը՝ տարածաշրջանային համաժողովում

**Թբիլիսիում ընթացող Համաշխարհային բանկի կազմակերպած՝ Հարավային Կովկասի տրանսպորտի ոլորտի հեռանկարներին նվիրված տարածաշրջանային ժողովում երեկ ելույթ է ունեցել Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը: Ինչպես տեղեկացանք նախարարության մամուլի ծառայությունից, նա նշել է, որ Հայաստանի կառավարությունը առաջնային տեղ է հատկացնում երկրի տրանսպորտային բնագավառի զարգացմանը: Այնուհետեւ Մանուկ Վարդանյանը ներկայացրել է տարածաշրջանային նշանակություն ունեցող Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ծրագիրը, հյուսիսային հարեւանի հետ բոլոր հիմնական միջազգային ճանապարհների վերականգնման նախագիծը, Հայաստանի կառավարության, Ասիական զարգացման բանկի եւ Համաշխարհային բանկի իրականացրած Հայաստանի գյուղական ճանապարհների եւ կենսական նշանակություն ունեցող ճանապարհների վերակառուցման ծրագրերը:**

**Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարն անդրադարձել է նաեւ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ուղեւորասար նոր տերմինալի բացմանը՝ նշել, որ մոտ ապագայում օդանավակայանի հարակից տարածքում նախատեսվում է կառուցել միջազգային լոգիստիկ կենտրոն, ստեղծել ազատ տնտեսական գոտի, երկաթգիծ եւ ավտոմայրուղի դեպի օդանավակայան:**

Ա. Մ.

# «Ավազակային հարձակման» նոր մանրամասներ




**Ինչպես երեկ «Ազգը» տեղեկացրել էր, Խանջյան 37 շենքի առաջին հարկում գործող տարադրամի փոխանակման կետի դիմաց, ժամը 18.35-ի սահմաններում հնչել են կրակոցներ, փոխանակման կետից դուրս եկած 40-ամյա Ռուդիկ Զ.-ի ոտքերի ուղղությամբ արձակվել է կրակահերթ, հետո նրանից հափշտակել են 10.000 ԱՄՆ դոլար: Ռուդիկ Զ.-ին օգնության հասած 52-ամյա Լեւոն Ա.-ն նույնպես ստացել է հրազենային վնասվածքներ: Հանցագործները դեպքի վայրից դիմել են փախուստի: Տուժածներին տեղափոխել են Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք, նրանք դեռ ի վիճակի չեն դեպքի մասին մանրամասներ հայտնելու: Ոստիկանության օպերխումբը դեպքի վայրի զննությամբ հայտնաբերել է կրակված 2 գնդակ, 9 մմ տրամաչափի, 3 եւ անհայտ տրամաչափի 1 կրակված պարկուճ: Նշանակվել են դատաձգաբանական եւ դատաբժշկական փորձաքննություններ:**

Մ. Մ.

# Ե՞րբ, ի՞նչու եւ ի՞նչ պատճառով է գործարարը հայտնվում իշխանության մեջ

*1-ին էջից*

Առայժմ անհայտ է՝ մեր տնտեսակին առավել հարազատ արժեքները որո՞նք են... կամ՝ բնությունից մեզ տրված ի՞նչ առավելություններ պետք է կարողանանք օգտագործել, վերջապես՝ ի՞նչ մեծ ծրագիր է առաջարկվելու գործարարներին մոտակա ժամանակներում. նախագահն այդպես էլ հստակություն չմտցրեց իր խոսքում, եւ ոչ մեկն էլ չգիտեր՝ ում հարցնում էինք: Մնում է ընկնել ենթադրությունների գիրկը՝ արդյո՞ք արեւային էներգիան օգտագործելու հեշտ ձեւ է գտնվել, կամ արդյո՞ք էլեկտրաէներգիա արտադրելու մի նոր, բացառապես հայկական եղանակ են գտել, որ 1 դրամի դիմաց հազարավոր դրամներ է տալու մեզ (հիշեցի՞ք «Արմենիկումը»), ինչպես որ կանխատեսողներից մեկն է գուշակել: Իսկ խոսքի այն գլխավոր հատվածը, որ բազմաթիվ ենթադրությունների տեղիք է տալիս, հեռուն գնալու լիցք ունի իր մեջ .«Այո՛, մենք կանգնած ենք նոր սկզբի առջեւ: Պատմական անհրաժեշտությունը պահանջում է փոխակերպում. պետք է փոխակերպվեն մեր պետական ծառայողը, հասարակական գործիչը, գործարարը եւ ընդհանուր առմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Գործարարությունը պետք է հետեւողականորեն տարանջատվի պետական համակարգից եւ իշխանությունից: Փոխարենը պետությունը պետք է շարունակի սովորել լիարժեքորեն հարգել եւ պաշտպանել յուրաքանչյուր քաղաքացու եւ գործարարի շահը: Պետությունը եւ գործարարը պետք է հանդես գան որպես վստահելի գործընկերներ, քանի որ հակառակ դեպքում անարդյունավետ է լինելու մասնավոր ձեռներեցությանն աջակցելու որեւէ ծրագրի իրագործումը»:

Ասվածը բարձր ճշմարտությունների համախումբ է, այսինքն՝ Հայաստանի օրենքներով հենց այդպես պիտի լիներ, ինչպես նախագահն է ասում, բայց կյանքում լրիվ հակառակն է: Մինչեւ հիմա հակառա՛կն է եղել, եւ այնքան խորն է մեզ մոտ բիզնեսի սերտաճումը իշխանական համակարգին, որ դրանց տարանջատման մասին խոսելն բոլորին եւ մշտապես միայն հռետորաբանություն է թվացել: Դրա մասին խոսում էին քաղաքական, լրագրողական շրջանակներում, փորձագիտական եւ զեկույցային մակարդակով, հաշվետվություններում եւ միջազգային գնահատականներում՝ միշտ նշելով, որ բիզնեսն ու քաղաքականությունը Հայաստանում այնպես են սերտաճել, որ դրանք արդեն տարբերել հնարավոր չէ, եւ այդ միախառնումը պարզապես խանգարում է երկրի զարգացմանը: Հիմա դա նախագահն է ասում: Արդյո՞ք միայն ասելու համար, թե հետեւելու են գործողությունները, միայն նախընտրական հռետորաբանություն է, թե՞ տակը բան կա: Կամ ինչպե՞ս պետք է տարանջատել, երբ մեծ հաշվով տարանջատողը նույնպես միախառնված է այդ երեւույթին: Որպեսզի այդպիսի տարանջատման գործընթացը սկիզբը դրվի՝ դրա համար նախ պետք է վիճակի մասնագիտական գնահատական տրվի համապատասխան մասնագիտական կամ հատուկ ձեւավորված կառույցի կողմից, անուն առ անուն հստակեցվեն միախառնման դեպքերը, սակայն դա արվի առանց քաղաքական հետին նպատակների: Հարկավոր կլինի նաեւ առանց կեղծավորելու պատասխանել այն հարցին, թե ե՞րբ, ի՞նչու եւ ի՞նչ պատճառով է գործարարը հայտնվում իշխանության մեջ կամ պետական համակարգում, ինչո՞ւ նա չի կարող իշխանությունից դուրս լինելով՝ իրեն պաշտպանված զգալ: Այդ հարցի պատասխանը եթե առանց երեսպաշտության, ազնվորեն տանք, նոր կարող ենք հասկանալ՝ տարանջատել կարո՞ղ ենք, թե՞ ոչ, տարանջատումն իսկապես տարանջատո՞ւմ է լինելու, թե՞ իշխանությանն անհաճո այս կամ այն գործարարի ունեցվածքի վերաբաշխում:

Մեզ մոտ յուրաքանչյուր իշխանություն թույլ է տվել հարստանալ իրեն հաճո մարդկանց: Այդ իսկ պատճառով գործարարին պետք է ամեն գնով հաճո դառնալ տվյալ իշխանությանը՝ ընդհուպ ընտրարշավների ֆինանսավորմամբ: Միաժամանակ նա հստակ գիտե՝ եթե իր հովանավորներն այլեւս իշխանության չլինեն, իր բիզնեսն այլեւս չի ծաղկի: Երբ ստեղծվի այնպիսի միջավայր, որ գործարարին բոլորովին պետք չլինի «մուծվել» եւ դրա դիմաց արտացոլվել նախընտրական ցուցակի անցողիկ տեղում՝ համապատասխան պաշտպանական զրահաբաճկոն ստանալով, երբ հարկայինը հարկային տեռոր չանի նրա նկատմամբ, գործարարներին չբաժանի մերոնքական եւ ոչ մերոնքական գործարարների, իշխանությունը մեկին տանիք չդառնա, մյուսին անտեր թողնի կամ կողոպտի, ահա այս դեպքում կարելի կլինի խոսել տարանջատումից: Երբ գործարարը վստահ լինի, որ իշխանության փոփոխության պարագայում իրեն կուլակաթափ չեն անի, նա ինչո՞ւ պիտի ուզենա գնալ Ազգային ժողով եւ հանգիստ, գրասենյակում իր բիզնեսի հաշվեկշիռը կազմելու փոխարեն՝ վերածվի կոճակ սեղմողի, դեռ անընդհատ էլ մտածի, որ ինքը չի զբաղվում բիզնեսով, եւ իբր՝ բիզնեսն իր որդունը կամ կնոջն է: Իսկ եթե բիզնեսի ու իշխանության տարանջատումը սոսկ մահակ է ծառայելու անհնազանդ գործարարներին հնազանդեցնելու, կամ քաղաքական անցանկալիներից բիզնես խլելու եւ ունեցվածք վերաբաշխելու համար, ապա, ներողություն, այդպիսի «տարանջատումն» ավելի լավ է առայժմ մոռանալ: Ամեն դեպքում նախագահի խոսքերն ասվել են, եւ հասարակությունը սպասում է հաջորդող քայլերին:

Նույնիսկ լուրջ քաղաքագետն է հավաստում, որ Հայաստանում հիմա կադրերի զտման ուղղահայաց եւ հորիզոնական եղանակներով վարչակազմը մաքրելու փորձեր են տեղի ունենում: Հայեցող ենք:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հարկային փոփոխությունների փաթեթ՝ համեմված հրաժարականի փոխադարձ պահանջներով

«Հայելի» ակումբի հրավիրած մամուլի ասուլիսի թեման հարկային փոփոխությունների փաթեթն էր: Հրավիրված էին հանրապետական **Վարդան Այվազյանը**, դաշնակցական **Արծվիկ Մինասյանը** եւ, իր խոսքերով, «ՀԱԿ-ին հարող», ԿԲ նախկին նախագահ **Բագրատ Ասատրյանը**:

Փաթեթն առաջինը սկսեց ներկայացնել Վարդան Այվազյանը, ասելով, որ ներկայիս փաթեթն էապես տարբերվում է սկզբնական տարբերակից, եւ մտահոգության տեղիք տվող դրույթները հանվել են: Ըստ հանրապետական պատգամավորի՝ բոլոր հնարավորությունները կան, որ պահանջվող գումարները հավաքվեն առանց փոքր եւ միջին բիզնեսի վրա ազդեցության: Վերջինիս վրա հարկային բեռ չի ավելանում, ավելին՝ հաստատագրված վճարի դաշտում գտնվողները անցնում են արտոնագրային վճարների, վերացվում է հարկային օրենսդրության 28-րդ հոդվածը եւ այլն: Վարդան Այվազյանը համաձայն է, օրինակ, կազինոների վրա հարկային բեռի 50 տոկոս ավելացմանը, բայց մտահոգություն կա, որ դրանք կարող են փակվել: Ավելի լավ:




Արծվիկ Մինասյանը հիմնականում համաձայն էր հարկային փաթեթին՝ նկատի ունենալով նրա բազմաթիվ փոփոխությունները 1,5 ամսվա քննարկումների արդյունքում: Որպես օրինակ նա նշեց սոցվճարները 7 հազար դրամից 9 հազար դրամ դարձնելու փոփոխության վերացումը: Դաշնակցական պատգամավորն ընդգծեց, որ հարկային եկամուտները Հայաստանում շատ ցածր են եւ չեն անցնում համախառն ներքին արդյունքի 17 տոկոսը: Ստվերային տնտեսությունը 30-50 տոկոս է, ինչը, նրա համոզմամբ, նշանակում է, որ կան ռեսուրսներ եւ իշխանությունները պետք է բյուջեի համալրման համար ջանքեր գործադրեն: Արծվիկ Մինասյանը հիշատակեց Համաշխարհային բանկի գնահատականները, ըստ որոնց 240 մլրդ դրամ հավելյալ հարկեր հավաքելու հնարավորություն կա Հայաստանում: Նա անհրաժեշտ համարեց Հայաստանում եւս պետական ծառայողների աշխատավարձերը բարձրացնել, ինչի իրականացման շնորհիվ հարկեր-ՀՆԱ ցուցանիշը հարեւան Վրաստանում հասավ 25 տոկոսի:

Բագրատ Ասատրյանը եւս «մեծ առումով» դրական դիրքորոշում ուներ հարկային փոփոխությունների փաթեթի նկատմամբ, բայց այն կարծիքի էր, որ նման երկարաժամկետ նշանակություն ունեցող փաստաթղթերը պետք է երկարատեւ շրջանառվեն եւ քննարկվեն, այլ ոչ թե 50 օրվա ընթացքում: Նրա հավաստմամբ, իշխանությունները հարկերը հավաքելու լրացուցիչ բեռ են վերցնում, բայց «այդ բեռն այնքան էլ մեծ չի», քանի որ 35-40 տոկոսով հարկային մուտքերն ավելացնելու հնարավորություններ կան:

Վերոնշյալ ելույթներից հետո, երբ բարձրացված հարցադրումների առնչությամբ Վարդան Այվազյանը սկսեց պարզաբանումներ տալ, Բագրատ Ասատրյանը նրա խոսքին զուգահեռ սկսեց տվյալներ ներկայացնել, թե ինչպես 2009-ի համար նախատեսված ցուցանիշները Հանրապետական կուսակցությունը ներկայացնող իշխանությունները չեն կատարել եւ 2012-ի բյուջեում դրված ցուցանիշները դրանցից ցածր են: Դիմելով Վարդան Այվազյանին՝ Բագրատ Ասատրյանը կտրուկ անցում կատարեց դեպի քաղաքական հարթություն, ասելով, որ հանրապետականները վատ իշխանություն են, եւ կոչ արեց նրանց՝ հրաժարական տալ: Ինչին Վարդան Այվազյանը պատասխանեց, որ չկատարված ցուցանիշները պայմանավորված են եղել ճգնաժամով, ասելով. «Հայաստանը գտնվում է գալակտիկայի մի անկյունում, եւ տնտեսական ճգնաժամը՝ մինուս 14,6 տոկոս, բացարձակ Հայաստանի հետ կապ չուներ, հա՞», ապա ավելացրեց, որ մի քանի ամիս հետո ընտրություններ կլինեն, եւ «կտեսնենք, թե ով հրաժարական կտա»: Մի խոսքով, սկսվեց հարկային փոփոխությունների փաթեթի հետ որեւէ կապ չունեցող լեզվակռիվ, որը որոշակի դադարներով շարունակվեց մինչեւ մամուլի ասուլիսի վերջը:

«**Ազգի**» հարցն առնչվում էր 90 հազար դոլարից բարձր մեքենաների վրա դրվող այսպես կոչված «շքեղության հարկին»: «Ինչո՞ւ էր ընտրվել հենց այս շեմը, այլ ոչ թե ավելի ցածր», մեր հարցին ի պատասխան Վարդան Այվազյանն ասաց, որ չի կարող ասել, թե ինչու հենց 90 հազար դոլարանոց մեքենաներն են ընտրվել: Սակայն նա նշեց, որ պետք է նկատի ունենանք, որ 32 տոկոս էլ մաքսատուրք է դրվում ներմուծվող մեքենայի վրա: Բագրատ Ասատրյանն էլ ասաց, որ այս որոշմամբ ավելի շուտ նպաստում ենք Հայաստանը մեքենաների գերեզմանոց դարձնելուն, եւ պետք է խրախուսենք, որ նոր մեքենաներ բերվեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄՈՆՐԵԱԼ

# Նվիրվում է «Ապագայ» շաբաթաթերթի տարեդարձին




**Թեքեյան մշակութային միության կազմակերպությամբ Նյու Յորք-Նյու Ջերսիի «Մհեր Մկրտչյան թատերախումբը» նոյեմբերի 19-ին «Քոլեժ վանիեի» հանդիսասրահում ներկայացնելու է անմահ Հակոբ Պարոնյանի «Շողոքորթը» երգախառն կատակերգությունը՝ բեմադրությամբ Գագիկ Կարապետյանի: Ներկայացումը նվիրված է լինելու Կանադայում հրատարակվող մեր գործընկեր ԹՄՄ «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական եռալեզու (հայերեն, անգլերեն եւ ֆրանսերեն) շաբաթաթերթի լույս ընծայման 36-րդ տարեդարձին:**

**«Ազգը» մի անգամ եւս իր ջերմագին շնորհավորանքներն ու մաղթանքներն է հղում այդ առթիվ: Հ. Ծ.**

# Ինտերնետի տնական առաջարկ Orange-ից

**Orange-ի գործունեության մեկնարկի երկրորդ տարեդարձի առթիվ ընկերությունը մեկնարկում է տնական խելահեղ առաջարկ ինտերնետի իսկական սիրահարների համար: Նոյեմբերի 10-ից դեկտեմբերի 10 բաժանորդագրվելով Ինտերնետ Հիմայի տնական սակագնային պլանին 12 ամսով (10,000 դրամ ամսավճարով) ՝ բաժանորդներն առաջին 12 ամիսների ընթացքում կստանան ամսական 25 ԳԲ գերարագ ինտերնետ, 40 հաղորդագրություն բոլոր ուղղություններով, ինչպես նաեւ նոր Ինտերնետ Հիմա 14.4 մոդեմ ընդամենը 1 դրամով:**

**Գերարագ ինտերնետը սպառելուց հետո բաժանորդները կշարունակեն օգտվել անսահմանափակ ինտերնետից 512 կբ/վ ներբեռնման եւ 256 կբ/վ վերբեռնման արագությամբ:**

**Առաջին տարվա ավարտից հետո բաժանորդները կսկսեն ստանալ ամսական 12 ԳԲ գերարագ ինտերնետի փաթեթ եւ կշարունակեն ստանալ բոլոր ուղղություններով ամսական 40 հաղորդագրություն ուղարկելու հնարավորություն:**

# Ցավակցություն

ՌՀՄ եւ ՀՀԿ փոխնախագահ Վլադիմիր Աղայանն ու ընտանիքը խորապես վշտացած են

**Սամվել Խաչատուրի Հովհաննիսյանի**

վաղաժամ մահվան կապակցությամբ եւ ցավակցում են նրա ընտանիքին ու հարազատներին:

«Ազգ»-ը միանում է ցավակցություններին:

# Հերքում

**Միաժամանակ երկու՝ ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի եւ գործարար Սիլվա Համբարձումյանի գրասենյակներից երեկ ստացանք հերքում, առաջինը հեռախոսով, իսկ երկրորդը՝ էլեկտրոնային հաղորդագրությամբ, որ իրականությանը չի համապատասխանում մեր թերթի նախորդ՝ նոյեմբերի 10-ի համարում «Բիզնես լեդի. Երբ ես մեքենա ունեի, վարչապետը սիգարետի փող չուներ» վերնագրով հոդվածում լույս տեսած՝ «Գործարար Սիլվա Համբարձումյանը ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի նախկին կինն է» տեղեկությունը:**

*«ԱԶԳ»*

**«ԿՈՌՆԵՏ-ԱՄ» ՓԲԸ**

**հայտարարում է նախկինում շահագործված ավտոմեքենաների իրացում:**

**Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք**

**www.cornet.am վեբ կայք: Հեռ. 594159, 098210070**

# Անշարժ գույքի գները սեպտեմբերին անփոփոխ են մնացել

*1-ին էջից*

**Մարզերում, բացառությամբ Երեւանի, սեպտեմբերին վաճառվել են 415 բնակարաններ, որոնց քանակը օգոստոսի համեմատ աճել է 3,5 տոկոսով, իսկ 2010-ի սեպտեմբերի համեմատ՝ 13,1 տոկոսով: Բնակարանների միջին գները մարզերում օգոստոսի համեմատ գրեթե անփոփոխ են մնացել (աճել են 0,1 տոկոսով):**

**Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները սեպտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 196 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 140 հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 139 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 128 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 124 հազար դրամ, Գորիսը՝ 120 հազար դրամ, Իջեւանը 118 հազար դրամ, Արմավիրը՝ 113 հազար դրամ, Մասիսը 109 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:**

**2011-ի սեպտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 491 գործարք, որից 134-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2011-ի սեպտեմբերի օգոստոսի համեմատ նվազել է 0,4 տոկոսով, իսկ մարզերում՝ 31,8 տոկոսով: 2010-ի սեպտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 29,3 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2,2 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2011-ի սեպտեմբերին օգոստոսի համեմատ աճել են 0,2 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների գներն այսպիսին են եղել.**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | սեպտեմբեր 2010թ. | սեպտեմբեր 2011թ. | օգոստոս 2011թ. |
| Կենտրոն | 483700 | 452100 | 453400 |
| Արաբկիր | 400200 | 363500 | 363300 |
| Քանաքեռ Զեյթուն | 297100 | 275600 | 269100 |
| Նորք-Մարաշ | 284600 | 295200 | 292100 |
| Ավան | 254100 | 253800 | 250800 |
| Էրեբունի | 257700 | 238400 | 240800 |
| Շենգավիթ | 262300 | 237000 | 235000 |
| Դավթաշեն | 285600 | 268400 | 272400 |
| Աջափնյակ | 249400 | 236000 | 234000 |
| Մալաթիա Սեբաստիա | 251900 | 233400 | 235600 |
| Նուբարաշեն | 150300 | 150100 | 150100 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 288800 | 273000 | 272400 |

**Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները սեպտեմբերին օգոստոսի համեմատ աճել են 0,8 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 320 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է 1 քմ-ն 162 հազար դրամ, երրորդը՝ Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 146 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 133 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 132 հազար դրամ, Իջեւանը եւ Գորիսը 128 հազար դրամ 1 քմ դիմաց:**

**Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2011-ի սեպտեմբերին 2010-ի սեպտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 19,6 տոկոսով, աճուրդով վաճառքներինը նվազել 27,3 տոկոսով: Ընդ որում, Երեւանում վերջին ցուցանիշը աճել է 2 անգամ:**

**2011-ի սեպտեմբերին 2011-ի օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8,4 տոկոսով, իսկ 2010-ի սեպտեմբերի համեմատ՝ 18,9 տոկոսով:**

**Իրականացվել են հիփոթեքային գրավադրման 202 գործարքներ, որից 144-ը՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 78,2 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 16,8 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2011-ի օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 4,1 տոկոսով, ընդ որում, Երեւանում նվազել՝ 5,1 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 1,8 տոկոսով: 2010-ի սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 35,6 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 28,6 տոկոսով, իսկ մարզերում՝ 56,8 տոկոսով:**

**Այսպիսով, Հայաստանի անշարժ գույքի գները սեպտեմբերին հիմնականում մնացել են անփոփոխ, իսկ ընդհանուր առմամբ վերջին ամիսներին դրանք որոշակիորեն նվազել են: Հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսների ցուցանիշներում հավանական է որոշակի աշխուժացում՝ կապված տնտեսական ակտիվության ժամանակաշրջան լինելու եւ արտերկրում ժամանակավոր աշխատանքի մեկնածների՝ Հայաստան վերադառնալու հետ:**

## Բարեգործություն

# Արա Վարդանյան. «Ավելացնենք նվիրատուների թիվը, որպեսզի այդպես փոխհատուցենք գումարների հնարավոր նվազեցումը»

***«Հայաստան» համահայկական հիմնադրամի 14-րդ հեռուստամարաթոնը, ինչպես հայտնի է, տեղի է ունենալու նոյեմբերի 24-ին, իսկ դրամահավաքի ընթացքում հավաքված միջոցները, ինչպես եւ անցած մարաթոնի պարագայում, ուղղվելու են Արցախում եւ Հայաստանում իրականացված ծրագրերին: «Ազգը» զրուցեց հիմնադրամի տնօրեն Արա Վարդանյանի հետ.***

**- Նոյեմբերի 24-ին տեղի ունենալիք հեռուստամարաթոնից ի՞նչ ակնկալիքներ ունեք, ինչ նախապատրաստություններ են եղել, այս անգամ որ ուղղությամբ են օգտագործվելու նոր դրամական հոսքերը, չնայած «Ջուր պարգեւիր, կյանք նվիրիր» կարգախոսից էլ կանխատես դա ակնհայտ է:**

- Այս դրամահավաքից գոյացած միջոցները, նախորդի պես, ԼՂՀ ջրամատակարարման եւ Հայաստանի գյուղերում իրականացվող ծրագրերին են ուղղվելու: Անցած տարվա միջոցներով մեզ չի հաջողվել Արցախում լուրջ փոփոխություններ մտցնել ջրամատակարարման համակարգում, չնայած բազմաթիվ ծրագրեր իրականացվել են, բայց դեռեւս կան բազմաթիվ բնակավայրեր, որ ջրամատակարարման խնդիր ունեն: Ավելին՝ նույնիսկ այս հեռուստամարաթոնից հետո մենք չենք կարողանալու հայտարարել, որ ամբողջությամբ խնդիրը լուծվելու է, բայց կկարողանանք ասել, որ լուրջ զարկ ենք տվել այդ խնդրի լուծմանը: Քանի որ շատ սերտ համագործակցում ենք ԼՂՀ կառավարության հետ, պատկերացում ունենք այդ խնդրի վերաբերյալ՝ խնդրի ընդհանրական լուծման համար պահանջվում է 100 մլն դոլարից ավելի գումար: Ուղղակի ռեալիստ լինելով՝ մենք հասկանում ենք, որ անհնար է 100 մլն դոլար հավաքելը եւ այդ հարցն ամբողջությամբ լուծելը: Սակայն խիտ բնակեցված վայրերում մենք հուսով ենք, որ այդ հարցը կլուծենք: ԼՂՀ-ում ջրամատակարարման ծրագրերը, երեւի աշխարհում ամենաթանկ նմանատիպ ծրագրերն են: Դա պայմանավորված է նրանով, որ շատ մեծ տարածքի վրա սակավաթիվ մարդիկ են ապրում. մի գյուղում ապրում է 300 մարդ, բայց գյուղը սփռված է շատ մեծ տարածքի վրա: Տներն իրարից շատ հեռու են, այսինքն՝ ջրամատակարարման հարցը լուծելու համար դու պարտավոր ես և՛ ներքին ցանց սարքել, և՛ դեպի ամեն տուն խողովակ քաշել: Այսինքն՝ 300 մարդու ջուր տալու համար մի քաղաքի ջուր տալու չափ փող ես ծախսում: Սա մի բան է, որի դեմ չես կարող պայքարել, ուղղակի որոշում ես կայացնում հարցը լուծելու եւ լուծում ես: Անցած տարվա ընթացքում մենք բավականին լուրջ ներդրումներ ենք արել և՛ Ասկերանում, և՛ Հադրութում, և՛ Մարտունիում, և՛ Բերձորում, բազմաթիվ գյուղերում ենք սկսել ջրատարների իրականացումը: Բայց այս տարի, հուսով եմ, գոնե նույն չափով կանենք եւ ԼՂՀ կառավարության հոգսը կթեթեւացնենք: Շեշտեմ բոլոր տեղերում, որտեղ ծրագիր է իրականացնում հիմնադրամը, ԼՂՀ կառավարությունն էլ է մտնում ծրագրի մեջ, որպեսզի իրականացված աշխատանքն իրոք մեծածավալ լինի:

**- Ի՞նչ գումարի սահմաններում է մարաթոնից ակնկալիքը:**

- Թիվ չեմ կարող ասել: Ակնկալիք չունեմ, հույս ունեմ, որ անցած տարվա արդյունքին կհասնի: Անցած տարի 20 մլն 800 հազար դոլարի սահմանում էր, որից 10 մլն 600 հազարը Ռուսաստանի Դաշնությունից էր եկել, մնացյալն ամբողջ աշխարհից: Տարբերությունն այս տարի այն է, որ հեռուստամարաթոնը նոյեբերի 24-ին է, իսկ ՌԴ դրամահավաքը՝ դեկտեմբերի 21-ին: Այսինքն՝ հեռուստամարաթոնից հետո ունենալու ենք մի թիվ, որը վերջնական չի լինելու, վերջնական թիվը կարող ենք հայտարարել դեկտեմբերի վերջին: Ասեմ, որ ըստ տրամադրվածության, մեր տեղական մարմինների ներկայացուցիչների վկայությամբ՝ ժողովրդի տրամադրվածությունը լավ է, որ կմասնակցեն: Բայց պետք է հիշենք, որ ամբողջ աշխարհում շատ սուղ տնտեսական իրավիճակ է ստեղծված, մանավանդ Եվրոպայում: Սա ասում եմ ոչ թե այն պատճառով, որ պատրաստ լինենք սուղ դրամահավաքի: Բայց պետք է հաշվենք այն իրողության հետ, որ ԱՄՆ-ը, ցավոք, դեռ դուրս չի եկել տնտեսական ճգնաժամից, եւ ամենայն հավանականությամբ շատ ավելի դաժան ճգնաժամի մեջ է հայտնվելու: Կռահել, թե մեր բարերարներից ով որքան կպակասեցնի կամ կավելացնի հատկացումները, դժվար է, սակայն մենք աշխատանք ենք տանում, որ ավելացնենք նվիրատուների թիվը, որպեսզի այդպես փոխհատուցենք գումարների հնարավոր նվազեցումը, որը կարող է տեղի ունենալ:

**- Օրինակ՝ հեռախոսային հաղորդագրությունների միջոցը, որ հոկտեմբերի 1-ից կիրառել եք, արդյունք գրանցե՞լ է:**

- Այս պահի դրությամբ մոտավորապես 3000 հաղորդագրություն ենք ստացել Հայաստանում, 500 դրամ է մեկ հաղորդագրության նվիրատվությունը: Այս տարի հեռախոսային նվիրատվությունը նաեւ ՌԴ-ում ենք կիրառել՝ 10 դոլարին համարժեք գումար է 1 հաղորդագրությունը: Ինչպես միշտ՝ «Հայփոստով» ընդունում ենք դրամական նվիրատվություններ Հայաստանում, հեռախոսային նվիրատվությունը նաեւ ԱՄՆ-ում է կատարվում: Եվրոպայում ֆոնեթոնին արդեն պատրաստվում են՝ նոյեմբերի 17-ին է այն մեկնարկելու: Լիբանանում ռադիոթոն են անելու, Բրազիլիայում եւ Արգենտինայում կրկին ֆոնեթոն են անելու: Նաեւ խոսք կա, որ մյուս տարվա մարտին Արգենտինայում լինելու է դրամահավաք-ճաշկերույթ, որի ընթացքում կրկին գումարներ կհավաքվեն և՛ ջրատարների, և՛ այլ ծրագրերի համար: Նոյեմբերի 24-ի հեռուստամարաթոնի նորությունն այն է, որ այս տարի հեռուստամարաթոնի ընթացքում մենք նյութեր ենք հեռարձակելու Հայաստանի եւ ԼՂՀ մասին, որոնք համահայկական հիմնադրամի հետ կապ չունեն: Օրինակ՝ մեր շախմատի թիմի հաջողությունների, կամ Տիգրանակերտի մասին, որպեսզի հայերն աշխարհում տեսնեն, թե Հայաստանում եւ Արցախում ինչ նորություններ կան. օգտագործում ենք առիթը եւ տեղեկություններ ենք տալիս մեր հայրենակիցներին:



**- Առաջիկա ծրագրերում Հայաստանում ո՞ր ուղղություններին եք կենտրոնանալու:**

- Հայաստանում այս պահին ավարտվող մի քանի կարեւոր ծրագրերի մասին նախ խոսեմ. օրինակ՝ Շենգավիթի գիշերօթիկ մանկապարտեզը Երեւանում միակն է լինելու իր տեսակի մեջ, արդեն ավարտական փուլում է, կահավորված է, պաշտոնական բացումը դեռ չի եղել: Մանկապարտեզ գնալու են այն երեխաները, որոնք ծնող ունեն, բայց անապահով են, երկուշաբթիից ուրբաթ ապրելու են գիշերօթիկ մանկապարտեզում (160 երեխայի համար է նախատեսված): Ղափանի մանկական հիվանդանոցի ամբողջական վերակառուցումն ու կահավորումն ենք ավարտում, Նորքի տուն-ինտերնատում երկու հարկ, Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցում մեկ հարկ ենք նորոգում, Դիտավանում դպրոց ենք կառուցում, Աշոցքում ամբողջությամբ նոր դպրոց ենք կառուցում: Տավուշում ընդհանրապես ծրագրերը շարունակելու ենք՝ բարերարներ կան, մասնավորապես Արգենտինայի հայ համայնքից, որոնք հետաքրքրված են Տավուշի մարզով: Ընտանիքներ են, որոնք մի ծրագիր ավարտելուց հետո ցանկություն են հայտնել նորն սկսելու: Հնարավոր է՝ այնտեղ ջրամատակարարման ծրագրեր շարունակվեն: Աբովյանի հիվանդանոցում եւս մի հարկ պետք է նորոգենք, դա երկու ամսից կսկսենք:

**- «Հայաստան» հիմնադրամի աշխատանքին խանգարող հանգամանքներ լինո՞ւմ են:**

- Մեզ խանգարում է այն հանգամանքը, որ հայերս իրար չենք վստահում: Հայաստանի կոռուպցիայի մասին են խոսում: Բայց հիմնադրամում այնպիսի մեխանիզմներ ենք ստեղծել, որոնք վերահսկման եւ հաշվետվողականության առումով բացառիկ են: Ես չգիտեմ մի այլ ընկերություն, որը մեր չափ ստուգումներ է անցնում եւ մեր չափ հաշվետվություն է տալիս: Միակ կառույցն է, որը ոչ մի տեսակ քաղաքական իրողությունների երբեք չի խառնվում, զբաղված ենք մեր գործով՝ ծրագրեր իրականացնելով:

Ես անձնապես հուսահատվում եմ, երբ ինչ-որ թերթում մեր մասին ստահոդ հոդված է տպվում: Չես հասկանում նպատակը: Ի վերջո պետք է հասկանալ, որ ողջ աշխարհում 400 հազար նվիրատու ունենք, որոնցից 50 հազարն է Հայաստանում, իսկ 350 հազարը մեզ հսկում են: Բայց եթե մարդն ուզում է, որ Արցախում դպրոց կառուցի, առավոտը բացում է որեւէ թերթ եւ տեսնում է այնտեղ հիմնադրամի հանդեպ կասկած հարուցող նյութ, նա այլեւս չի ստուգում դա, դա նրա մտքում տեղ է անում: Բարեբախտաբար՝ մենք այնքան թափանցիկ ենք աշխատում, որ այդպիսի նյութերը չեն կարող շատ լինել:

**- Իսկ գործնականում բարերարները իրենց գումարների շարժը վերահսկելու հնարավորություն ստանո՞ւմ են:**

- Յուրաքանչյուր տարի տարբեր երկրներից մենք բարերարների խմբեր ենք ունենում, որոնք գալիս, տեղում բոլոր ծրագրերը նայում են: Օրինակ՝ Տավուշի մարզում ծրագրեր իրականացնող արգենտինահայերը յուրաքանչյուր տարի գալիս են Հայաստան, գնահատում են աշխատանքը, եւ միայն դրանից հետո որոշում՝ շարունակե՞լ աշխատանքը, թե՞ ոչ: Բացի դրանից, և՛ ֆինանսական, և՛ ֆիզիկական միջազգային աուդիտ ենք անցնում, իսկ աուդիտի արդյունքները ինտերնետային կայքում դրված են, այդ թվում՝ թերություններն այնտեղ արտացոլված են:

Ամփոփելով կուզեի ասել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր ուսերին ծանր բեռ է վերցրել դրամահավաքի գաղափարը տարածելու: Ծրագրեր իրականացնելը շատ հեշտ է, դժվար է հասարակությանը սովորեցնել, որ բարեգործությունը շատ կարեւոր է: Եվրոպայում եւ ԱՄՆ-ում դպրոցի առաջին դասարանցի աշակերտը գիտե, որ տարին մեկ անգամ պետք է մեկին օգնի, բարեգործություն անի, մեզ մոտ դա դեռ կենսակերպի մեջ չկա:

**- Մեր օլիգարխները մասնակցություն ունենալո՞ւ են այս տարի:**

- Միանշանակ: Գրեթե բոլոր գործարարներին գրավոր դիմել ենք նամակով: Մինչեւ մարաթոնը սովորաբար նրանք մեզ պատասխանում են, թե ո՞վ՝ ինչ չափով կմասնակցի: Ուզում եմ պատասխանել հաճախ հնչող այն հարցադրմանը, թե ինչո՞ւ են մշտապես Արցախում ծրագրեր իրականացվում: Նախ ամեն հայ պետք է կարողանա պատասխանել այն հարցին, թե որո՞նք են հայերիս համար կարեւոր խնդիրներն այսօր. ես անձնապես երկու խնդիր եմ տեսնում՝ Լեռնային Ղարաբաղի ճանաչումն ու Ցեղասպանության ճանաչումը: Տնտեսությունը զարգացնելը Հայաստանի համար ժամանակի հարց է, իսկ վերը նշված երկու խնդիրները Հայաստանի համար առաջնային են: Հիմա հայերս ամբողջ աշխարհին պետք է ցույց տանք, որ Լեռնային Ղարաբաղն ուղղակի մեր սրտերում է, եւ բացառում ենք հող հանձնելը: Դրան պետք է նպաստենք հեռուստամարաթոնի դրամահավաքով, իսկ ԼՂՀ նախագահի համար էլ հեռուստամարաթոնը լուրջ ամբիոն է, որ դիմի ողջ աշխարհի հայությանը, ենթատեքստով ասելով՝ ես այստեղ եմ, ԼՂՀ-ն մերն է եւ մերն է մնալու:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Արա Վարդանյանի հարցազրույցի՝ Շուշիի ծրագրերի հատվածը կներկայացնենք առաջիկա համարներից մեկում:*

# Գուցե եւ չկրճատվեն առաջնային բուժօգնության եկող տարվա ծախսերը

**«Տավուշի մարզի Արճակնուս համայնքն ունի 120 բնակիչ: Համայնքի ԲՄԿ-ն գտնվում է դպրոցի մեկ սենյակում: Աշխատում է մեկ բուժքույր: ԲՄԿ-ն ապահովված չէ անհրաժեշտ սարքավորումներով եւ գույքով, բացակայում են անհրաժեշտ բոլոր պայմանները ու բուժծառայություն մատուցելու նախադրյալները: ԲՄԿ-ում կան միայն կշեռք եւ ճնշման ապարատ», սա քաղված է Օքսֆամ ՄԲ-ի հայաստանյան գրասենյակի եւ Արմավիրի զարգացման կենտրոնի Տավուշի մարզում կատարած առաջնային բուժօգնություն տրամադրելու պայմանների ուսումնասիրությունից, որում չկա գեթ մեկ քիչ թե շատ տանելի իրավիճակի նկարագրություն: Չնայած ներկայացված իրականությանն ու հակաճգնաժամային օրակարգը ձեւավորելիս ՀՀ կառավարության աղքատամետ պետական ծախսերը չկրճատելու պարտավորությանը, այնուամենայնիվ 2012-ի պետբյուջեի նախագիծն առաջնային բուժօգնության ոլորտում նախատեսում է ընթացիկ տարվա համեմատ ծախսերի կրճատում: Պետբյուջեի նախագիծը հաշվարկվել էր գործատուի սոցվճարների ավելացումը ներառելով եւ կազմել շուրջ 295 մլն դրամ, ինչի վերահաշվարկի դեպքում նվազումը կարող է կազմել ավելի քան 300 մլն դրամ: Ինչպես փաստվում է ի նպաստ իրականացվող քաղաքականության եւ բյուջետային որոշումների արդյունավետության Օքսֆամ ՄԲ-ի հայաստանյան գրասենյակի եւ Տնտեսական զարգացման եւ հետազոտությունների կենտրոնի կատարած առաջնային բուժօգնության համակարգի պետական ծրագրերի ուսումնասիրության մեջ. «2012-ի բյուջեի նախագծով առաջնային արտահիվանդանոցային բուժօգնության համար նախատեսված գումարներով հնարավոր չէ 2012-ին հիմնական քաղաքականության փաստաթղթերով (ՀՀ կայուն զարգացման ՀՀ նախագահի նախընտրական եւ ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության ծրագրեր) սահմանվածի փաստացի իրականացումը: Այն թույլ չի տա ապահովել ոչ միայն պետության ստանձնած պարտավորությունների բավարար իրականացում, այլեւ 2011-ին տրամադրած ծառայություններին համարժեք մակարդակը: Հետեւաբար առաջարկվում է զգալիորեն ավելացնել «Բնակչության ԱԱՊ ծառայություններ» եւ «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» քաղաքականության միջոցառումների գծով ֆինանսավորումը, առնվազն մինչեւ 2011-ին համադրելի մակարդակ՝ ի հաշիվ առողջապահությունից պակաս կարեւոր ոլորտների»:**

**Վերոնշյալ ուսումնասիրության բոլոր մանրամասնություններն ու ծրագրի փորձագիտական թիմի առաջարկները նոյեմբերի 4-ին ՀՀ ԱԺ առողջապահության մայրության եւ մանկության եւ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել եւ նկատի են առնվել՝ 2012-ի պետբյուջեի նախագծում առաջնային բուժօգնության ոլորտում ընթացիկ տարվա համեմատ ծախսերի կրճատումը հիմնավորապես վերանայելու հիմք դառնալով: Ծրագրի փորձագիտական թիմը մեծ հույս ունի, որ ՀՀ ԱԺ առողջապահության մայրության եւ մանկության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությունը կնպաստի առնվազն ընթացիկ տարում առկա ԱԱՊ ծառայությունների մակարդակը:**

**Ն. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԱԴՐԲԵՋԱՆ

# «Թշնամի» որոնելիս...

Հարեւան երկրի տեսական, քաղաքական եւ հանրային շրջանակներն ախտահարած հիվանդությունների շարքում կայուն տեղ ունի «թշնամուց հալածվածի» սինդրոմը: Ադրբեջանի «թշնամի» է նա, ով այցելում է Լեռնային Ղարաբաղ: «Թշնամի» է ռուսաստանցի լրագրող Սոլովյովը, որ իրենց «քանին թթու է ասել»: «Թշնամի» է Իրանի «մոլլապետությունը», որ «չի փակում Հայաստանի հետ սահմանը»: Մի խոսքով՝ իրենք «շրջապատված են թշնամիներով եւ հերոսական ջանքերի գնով ոչ միայն պահում, այլեւ զարգացնում են անկախ պետականությունը»:

Ի՞նչ է դա տալիս ադրբեջանական հանրությանը: Միայն մի բան՝ որ Լեռնային Ղարաբաղը կորցրել են «ոչ թե սեփական թուլության, այլ թշնամիների խարդավանքների պատճառով»: Որքանո՞վ է սույն կարծրատիպը նպաստում ադրբեջանցիների հոգեւոր «վերազարթոնքին»՝ թողնենք հետինանկների խղճին: Երեւույթը, մինչդեռ, հաճախ զավեշտական, եթե չասենք՝ խղճահարույց դրսեւորումներ է ունենում:

Այս ասպարեզում առանձնապես «փայլատակում» է վաստակավոր լրագրող, «Բակինսկի ռաբոչի» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Տատյանա Չալաձեն: Որտեսզի ասվածը մերկապարանոց բանադրանք չինչի, փորձենք լարել մեր երեւակայությունը եւ պարզել, թե ի՞նչը կարող էր «միավորել» խորհրդային գրահասանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանին, ռուսաստանցի պաշտոնաթող դիվանագետ Վլադիմիր Կազիմիրովին եւ Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ հանգուցյալ Արկադի Վոլսկուն:

Բանական մարդը նման հարցադրումից միայն կզարմանա: Բայց մի պահեք: Տատյանա Չալաձեն «քրտնաջան» որոնումներով պարզել է, որ վերոհիշյալ անձինք... 1956 թ. մասնակցել են հունգարական դեմոկրատական շարժման բռնաճնշմանը: Բաբաջանյանը հրամայել է զրահատանկային զորքերին, Կազիմիրովը՝ եղել Հունգարիայում ԽՍՀՄ դեսպան Յուրի Անդրոպովի «համհարզը», իսկ Վոլսկին հայտնի չէ՝ ի՞նչ պաշտոնով, բայց «կարեւորագույն անձ էր» Բուդապեշտում:

- Հետո ի՞նչ,- կհարցնի ընթերցողը,- ի՞նչ կապ ունեն նրանք Ադրբեջանի հետ:

Ըստ Տատյանա Չալաձեի՝ «զարմանալի է, որ հենց Վոլսկին է նշանակվել ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ, իսկ Կազիմիրովը՝ ռուսաստանյան կողմից միջնորդ»: Ենթատեքստը հասկանալի՞ է: «Հայ Բաբաջանյանն է եղել Հունգարիայի «դահիճը»՝ գործընկեր ունենալով Վոլսկուն եւ Կազիմիրովին»: Վերջինիս մասին Չալաձեն ասում է, որ «դանակը միշտ թեւատակին է, երբ խոսքը վերաբերում է ղարաբաղյան խնդրին»: Այսինքն՝ «մշտապես խոցում է ադրբեջանցիներին»: Դե իսկ Արկադի Վոլսկու նկատմամբ Ադրբեջանում ձեւավորված կարծրատիպը վաղուց է հայտնի:

Անշուշտ, էժանագին քարոզչահնարանք է: Ինչպես ռուսներն են ասում՝ «չի կպչում»: Բայց քանի որ «ազդեցությունների» թեման շրջանառվել է, ստիպված ենք հակադարձել: Չալաձեն միտումնավոր անտեսում է Հունգարիայում ԽՍՀՄ դեսպան Յուրի Անդրոպովի դերը: Պատճառը պարզ է. «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւն իր սրընթաց կարիերայի համար պարտական է Անդրոպովին: Նա է Ալիեւին երաշխավորել Ադր. ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար: Նա է, որ Ալիեւին վստահել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնը, դարձրել երկրի բարձրագույն քաղաքական ղեկավարության՝ ԽՄԿԿ ԿԿ-ի քաղբյուրոյի անդամ:

Եթե Հունգարիայում մեկը «դահիճ է եղել», ապա առաջին հերթին դա Յուրի Անդրոպովն էր, որի զեկուցագրի հիման վրա էլ ընդունվել է Բուդապեշտ զորքեր մտցնելու եւ ապստամբությունն արյան մեջ խեղդելու վճիռը: Այսօր Չալաձեն նպատակահարմար չի տեսնում Հեյդար Ալիեւի անունը կապել Հունգարիայի «դահիճ» Անդրոպովի հետ: Իր գործն է: Բայց ինչո՞ւ է «դահճի» դերակատարություն վերագրում հայազգի մարշալ Համազասպ Բաբաջանյանին, ով կատարել է երկրի քաղաքական ղեկավարության հրամանը միայն: Սա է արտառոցը:

Ի վերջո, «դահիճ» էր Վոլսկին, թե ոչ՝ պատասխանը կտա պատմությունը: Փաստն այն է, որ նա Մոսկվայից գործուղվել էր ոչ թե Բաքու, այլ՝ Ստեփանակերտ: Հետեւաբար, հունգարական փորձը նրան կարող էր օգնել միայն եւ միայն ԼՂ-ում ծավալվող դեմոկրատական շարժումը բռնաճնշելու գործում: Պարզապես արժե հիշեցնել, որ Վոլսկուն ԼՂ-ում փոխարինել է Վիկտոր Պոլյանիչկոն՝ իր աֆղանստանյան փորձառությամբ: Եվ եղել է «Կոլցո» օպերացիա: Վիկտոր Պոլյանիչկոյին Ադրբեջանում չեն մոռացել: Նրան համարում են «ադրբեջանական ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը»:

Իրականում, սակայն, Հունգարիա-Չեխոսլովակիա-Աֆղանստան-Լեհաստան-Ալմա-Աթա-Լեռնային Ղարաբաղ-Ֆերգանա-Թբիլիսի-Վիլնյուս՝ սրանք նույն շղթայի առանձին օղակներն են: Ամենուր գործել է նույն սցենարը՝ բռնաճնշել դեմոկրատական, ազգային ձգտումները: Եվ եթե հունգարական փորձը կիրառվել է Լեռնային Ղարաբաղում, ապա միայն հանուն Ադրբեջանի շահերի:

Ինչ վերաբերում է խորհրդային պաշտոնյաների կամ զինվորականների ազգությանը, ապա Տատյանա Չալաձեին արժե հիշեցնել, որ մի որոշակի ժամանակահատված Բաքվի արտակարգ դրության պարետի պարտականությունները կատարել է Զիա Բունիաթովի հարազատ որդին: Այնպես որ, արժե նրան եւ հորը դասել ադրբեջանական ժողովրդի «թշնամիների» շարքին: Գուցե որդու պատճառո՞վ է իր բնակարանի շեմին սպանվել ակադեմիկոս Զիա Բունիաթովը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Անօթեւանների թվի աննախադեպ աճ ԱՄՆ-ում

Նյու Յորքում անօթեւան մարդկանց թիվը հասել է 40 հազարի: Իրավապաշտպանները ստեղծված կացության համար մեղադրում են քաղաքապետ Մայքլ Բլումբերգին, որը դեռ 2004-ին խոստացել էր լուծել սույն խնդիրը: Մինչդեռ անօթեւանների թիվն անընդհատ աճում է, եւ փողոցում հայտնվում են ոչ միայն գործազուրկներ, այլեւ վետերաններ:

Ամերիկյան քաղաքների անօթեւանները ծվարում են հին վագոններում կամ ստվարաթղթե տուփերի մեջ: Տնազուրկ մարդկանց մեջ պատերազմի վետերանների թիվն անցնում է 150 հազարից: Անընդհատ պատերազմող երկրում նրանք կազմում են բոլոր անօթեւանների 1/4-ը: Մարտնչած, վիրավորված, ընկերների մահը տեսած վետերաններից շատերը դժվարությամբ են հարմարվում խաղաղ կյանքին: Իսկ իշխանությունները հետզհետե ավելի քիչ միջոցներ են հատկացնում:

Բանակային գովազդներում նորակոչիկներին խոստանում են պայծառ ապագա, կարիերա, կրթություն, ԱՄՆ քաղաքացիություն: Հավաքագրման կետում քչերն են մտածում զորացրման մասին:



Անօթեւանների «մայրաքաղաքը» Լոս Անջելեսն է: Դեռ չավարտված պատերազմների երիտասարդ անտուն վետերանների թիվը 75 հազար է, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Բեւեռլի Հիլզի շքեղ առանձնատների մոտակայքում վետերանների հոսպիտալն է, որտեղ մահճակալները չեն բավականացնում: Կառավարության վետերանների գործերի վարչությունն անցյալում մեծ հողատարածք էր ստացել վետերանների բնակարանների կառուցման համար, բայց տների փոխարեն հիմա այնտեղ ավտոբուսի կայարան է, գոլֆի դաշտ եւ ավտոմեքենաների վարձույթի կետ:

Վետերանի քարտը պաշտոնապես տալիս է միայն անվճար բուժսպասարկման իրավունք, բայց իրականում դրանից օգտվում են ոչ բոլորը:

ԵՎՐՈ

# Ֆրանսիան եւ Գերմանիան փորձում են բարեփոխել եվրոգոտին

## *Գերմանիայում մշակած բանաձեւը թույլատրում է լքել գոտին*



**Ֆրանսիայի եւ Գերմանիայի իշխանությունները քննարկում են Եվրոմիության արժույթի գոտու բարեփոխման գաղափարը: Նախատեսվում է ստեղծել նոր եվրոգոտի, որը կլինի առավել ինտեգրված, բայց կունենա նվազ թվով մասնակիցներ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Վերջին ամիսներին երկու երկրները բանակցում են «բոլոր մակարդակներով» եվրոգոտու բարեփոխման հարցի շուրջը եւ փորձում են կազմել այն երկրների ցանկը, որոնք չեն ուզում կամ չեն կարող լինել եվրոգոտու կազմում (ներկայումս գոտու մեջ կա 17 պետություն):**

**Ի դեպ, Եվրոմիության անդամներից շատերը դեմ են եվրոինտեգրման մոդելի այդքան արմատական վերանայմանը:**

**Նոյեմբերի սկզբներին Կաննում՝ «Մեծ քսանյակի» գագաթաժողովում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին առաջին անգամ խոստովանեցին, որ Հունաստանը կարող է դուրս գալ եվրոյի գոտուց: Բացառված չէ, որ Եվրոպան շուտով ստիպված լինի արմատական քայլեր ձեռնարկել, ներառյալ 1999-ին ձեւավորված եվրոգոտու անդամների թվի կրճատումը:**

**Մերկելը մասնավորապես կարծում է, որ Եվրոմիության հիմնարար պայմանագրում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ, որոնք թույլ կտան վերականգնել ֆինանսական շուկաների կայունությունը: Բլումբերգ գործակալությունը հաղորդում է, որ Մերկելի «Քրիստոնեա-դեմոկրատական միություն» կուսակցությունը արդեն մշակել է բանաձեւ, որը նախատեսում է եվրոգոտուց առանձին երկրների դուրս գալու հնարավորություն:**

**Առաջիկա շաբաթ բանաձեւը կքննարկվի Գերմանիայում կառավարող ՔԴՄ կուսակցության համագումարում: Փաստաթղթի դրույթներից մեկի համաձայն, եվրոգոտու անդամ այն պետությունները, որոնք չեն ուզում կամ չեն կարող կատարել դրա բոլոր ֆինանսատնտեսական պահանջները, հնարավորություն կունենան լքելու եվրոգոտին, ընդսմին մնալով Եվրոմիության անդամներ:**

# Վ. Դանիլենկո. «Ես չեմ մասնակցել Իրանի միջուկային ծրագրի մշակմանը»

**Իրանում աշխատած գիտնական Վյաչեսլավ Դանիլենկոն, ում մասին (առանց անունը տալու) խոսվում է ՄԱԳԱՏԷ-ի զեկուցագրի գաղտնի հավելվածում, ժխտել է իր մասնակցությունը Իրանի միջուկային զենքի մշակմանը: Այդ մասին հաղորդում է «Կոմերսանտ» թերթը:**

**Գաղտնի հավելվածը չորեքշաբթի օրը հրապարակվեց Institute for Science and International Security կայքէջում: Այնտեղ խոսվում է օտարերկրացի ինչ-որ փորձագետի մասին, որը վճռական դեր է խաղացել Իրանի միջուկային ծրագրում: «ՄԱԳԱՏԷ-ի տվյալներով, այդ մարդը 1996-2002 թթ. աշխատել է միջուկային ֆիզիկայի իրանական կենտրոնում, իրանցիներին ուսուցանելով միջուկային մարտագլխիկների համակարգչային մոդելավորում: Նրա անունը փաստաթղթում չկա, բայց «Վաշինգտոն փոստը» ավելի վաղ հաղորդել էր, որ խոսքը նախկին խորհրդային միջուկագետ Վյաչեսլավ Դանիլենկոյի մասին է», գրում է «Կոմերսանտը»:**

**Ճշտված տեղեկությունների համաձայն, զեկուցագրում խոսքը տեխնիկական գիտությունների դոկտոր Վյաչեսլավ Դանիլենկոյի մասին է, որը Սնեժինսկի (Չելյաբինսկի մարզ) դաշնային միջուկային կենտրոնի նախկին աշխատակից է: 76-ամյա գիտնականը այնտեղ աշխատել է 1950-ականներից մինչեւ կենսաթոշակի անցնելը:**

**Ինքը՝ գիտնականը հավաստիացնում է, որ ինքը որեւէ կապ չունի Իրանի միջուկային ծրագրի հետ: «Ես ֆիզիկոս-միջուկագետ չեմ եւ Իրանի միջուկային ծրագրի հիմնադիրը չեմ», ասել է Դանիլենկոն «Կոմերսանտին» տված հարցազրույցում:**

**Դանիլենկոյի նախկին գործընկերը՝ նանոալմաստներ արտադրող «Ալիտ» (Ուկրաինա) եւ «Նանոգրուպ» (Չեխիա) ընկերությունների տնօրեն Վլադիմիր Պադալկոն, նանոալմաստների հիմնադիրն է. 1962-ին հենց Դանիլենկոն է հայտնագործել դրանց սինթեզումը պայթեցման մեթոդով:**

# Տարեց ամերիկացիները երիտասարդներից հարուստ են 47 անգամ

**Վերջին տարիներին տնտեսական անկման պատճառով երիտասարդ եւ տարեց ամերիկացիների կարողությունների տարբերությունը հասել է ռեկորդային չափերի: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վերլուծելով պետական վիճակագրության տվյալները: 65-ից բարձր տարիքի քաղաքացիները ակտիվները 47 անգամ ավելի մեծ ծավալ ունեն, քան 35-ից ցածր տարիքի ամերիկացիները:**

**Որպես կանոն, տարեց մարդիկ իրենց ունեցվածքը կուտակում են ամբողջ կյանքում, ուստի երիտասարդներից ավելի հարուստ են: Սակայն քառորդ դար առաջ այդ հարաբերակցությունը 5:1-ից մինչեւ 10:1 էր: 1984-ի համեմատությամբ, տարբերությունն ավելացել է 4,7 անգամ:**

**65-ից բարձր տարիքի մարդու գլխավորած տնտեսության ունեցվածքի միջին չափը 170,5 հազար դոլար է: Դա 42 տոկոսով ավելի է 1984-ի համեմատությամբ: Իսկ երիտասարդները միջին հաշվով ունեն ընդամենը 3,9 հազար դոլար, ինչը 68 տոկոսով գերազանցում է 80-ականների ցուցանիշը:**

**Ընդսմին երիտասարդների գլխավորած տնտեսությունների 37 տոկոսի կարողությունը զրոյական է կամ նույնիսկ բացասական:**

**Ճգնաժամից հետո իրավիճակը զգալիորեն սրվեց, քանի որ տարեցները չեն շտապում անցնել կենսաթոշակի, իսկ երիտասարդները բավարար քանակությամբ աշխատատեղեր չունեն: Երիտասարդ մասնագետները առավել խոցելի են գործազրկության դեմ հանդիման, որի մակարդակը վերջին տարիներին 9 տոկոսից չի իջնում:**

# Նախանձելի ճանապարհ

Կյանքի 75 տարիներ. հագեցած, բովանդակային, շռայլ: Շռայլ՝ դեպի արվեստը, գրականությունը, մեծ մշակույթը՝ ազգային ու համամարդկային: **Պողոս Հայթայանը** այդ ճանապարհի լուսավոր հանգրվանների որոնողներից է՝ ազգայինի ու համամարդկայինի չափումներով հավասարապես: Այն սակավներից, ով անցյալի ու ներկայի մարդկային-բարոյական արժեքների խառնաշփոթում կյանքի գիրքը ընթերցում է շիտակ՝ ապավինած մտավորականի իր խղճին: Նա օղակներից մեկը դարձավ այն շղթայի, որով շարունակվում է մեր հոգեւոր-իմացական կյանքի ընթացքը: Նա իր մասնագիտության հավատարիմ մշակն է: Ինչո՞ւ՝ այսպես, որովհետեւ որքան էլ իր հետաքրքրությունների ու վերաբերմունքի, ասելիքի առկայությանը՝ մեր մշակութային իրականության որեւէ նոր երեւույթի, փիլիսոփայական-գրական նոր երկի հանդեպ, նա վերապահորեն է մոտենում հրապարակային սեփական արձագանքին, ասելով, որ իր մասնագիտական շրջանակից դուրս գալ չի ուզում: Կերպարվեստագետ, նկարչության նվիրյալ՝ այնպիսի չափաբաժնով, որ զարմանում ես, թե ինչու ինքը չի դարձել վրձնի մեր վարպետներից մեկը: Դա սեր չէ սովորական, ինչ նա կրում է իր մեջ գույնի արվեստի հանդեպ, եւ ոչ մասնագիտական պարտք զուտ, այլ անհանգիստ, թթվածնի պես չհագեցնող քաղց, անհրաժեշտություն, մի յուրօրինակ հենարան՝ կյանքն իմաստավորող:



Մաքուր արվեստի ու արվեստագետ-մտավորականների հետ անցած ճանապարհ՝ նախանձելի ճանապարհ, նկարչության նման մերթ պարզ-առարկայական, մերթ խառը, վերացական-երեւութական: Նրա զրույցները մշտապես կերպարվեստի, նկարչության շուրջն են, արվեստի հանդեպ օրվա տագնապներով եւ միշտ զուգահեռվող անցյալին՝ Սարյան, Մինաս, Երվանդ Քոչար ու նրանց հաջորդող 60-ականների սերունդ: Նա նորի որոնողների հետ է եղել միշտ, այլախոհ-ավանգարդիստների, մտքի անակնկալների: Արվեստաբան, որ լավ է ճանաչում ժամանակի մթնոլորտը, շատ ուշադիր է նրա զարգացումներին՝ միաժամանակ քաղաքացիական ակտիվ վերաբերմունքով, շիտակ կեցվածքով՝ հասարակական երեւույթներին, ժամանակի ազգային-համամարդկային խնդիրներին:

Արվեստաբանը զգոն պահապանի պես է արձանագրում կերպարվեստի դաշտում տեղի ունեցող ամեն շարժ, ամեն նորություն: Զուտ տեսաբան լինելուց հեռու, ցուցահանդեսից ցուցահանդես չի որ հետեւել է նկարչի, քանդակագործի ստեղծագործական ընթացքին, կյանքն անց է կացրել արվեստանոցներում, արվեստագետների սրճարանային բոհեմում: Այդ նույն՝ Նկարչի տան սրճարանի ազատախոհ մթնոլորտի մասն է կազմել, որտեղ խմորվող ու հասունացող մտքերը, հոգու պոռթկումները ալիքվում-արձագանքվում էին օդում եւ այն սերմերն էին առողջ, որոնց բացակայությամբ կյանքը դադարում է նորոգվել, վերաստեղծվել, ստեղծագործվել - վերընթացն է դադարում:

Արվեստագետի իր հայացքներն անշուշտ ձեւավորվել են ակադեմիական միջավայրում (բայց իր նկարագիր-խառնվածքը որքա՜ն հեռու է ակադեմիականությունից-արտիստիկ, ազատ). մասնագիտական կրթություն ստացել է Լենինգրադի Ռեպինի անվ. Գեղարվեստի ակադեմիայում, աշխատանքային հարուստ փորձը կուտակել արվեստի պատասխանատու-կարեւոր օջախներում՝ 1961-ից սկսած՝ Արվեստի ինստիտուտ, Գեղարվեստաթատերական ինստիտուտ, 12 տարի Հայկական սովետական հանրագիտարանում, 5 տարի Ազգային պատկերասրահում, 1987-1992 թթ. Նկարիչների միության քարտուղարն էր, 1992-98 թվականներին՝ նախագահը: Հեղինակել է բազմաթիվ հեռուստատեսային հաղորդումներ, հոդվածներ (Մինաս Ավետիսյանին, Հարություն Կալենցին, Երվանդ Քոչարին, Ռուբեն Ադալյանին, Ռոբերտ եւ Հենրի Էլիբեկյաններին, Արա Շիրազին, Էդուարդ Խարազյանին, Ռուդոլֆ Խաչատրյանին նվիրված), կատալոգների, գրքերի առաջաբաններ (Սեդրակ Առաքելյան, Արա Շիրազ, Հակոբ Կոջոյան, Ջոտտո, Ռուբեն Ադալյան, Էժեն Դելակրուա, Սեյրան Խաթլամաջյան):

60-ականներից մինչ այսօր Պողոս Հայթայանը հավատարիմ ուղեկից-մասնակիցն է հայ կերպարվեստային դաշտի ձեւավորումներին ու զարգացումներին, նրա կայացումներին՝ դասականությունից մինչեւ ամենամոդեռն-ավանգարդիստական մոտեցումներ: Եվ ամենակարեւորը՝ թե՛ անցյալի գաղափարական պատնեշումների դժվարություններում, թե՛ ներկայիս հեղհեղուկ-սայթաքուն, պսեւդոազատական տեղատվություններում նա պահպանում է գեղագիտական իր անհատական կողմնորոշում-դավանանքը, սկզբունքային մոտեցումները: Նրա հայացքը ճշմարիտ որոնողի հայացք է՝ նկատող, արձագանքող, նա շատ արագ է տեսնում տաղանդը, նաեւ ապաշնորհությունը եւ ոչ միայն արվեստի, արվեստաբանության մեջ, նաեւ լրագրային հրապարակումներին է հետեւում, այն քչերից է, որ արձագանքում է. գիտես, որ մի ուշադիր ու անաչառ հայացք կա, նկատում է:

Բնականաբար իր նախասիրությունների արվեստագետ-համախոհների շրջանակն ունի (Ադալյաններ, Էլիբեկյաններ, Արա Շիրազ, Էդ. Խարազյան եւ ուրիշներ), բայց արվեստաբանի լայնախոհ հայացքի ներքո կշեռքի նժարի հավասարակշռությամբ գնահատանք ունի ամեն արժանավորի ու լավի հանդեպ:

Հրաշալի զրուցընկեր է, կենդանի պատմող, որի նկարագրությունները հայացքիդ առաջ պատկերանում են անցյալի ճշմարտություններով ու հմայքով, նրանց,՝ որ այլեւս մեզ հետ չեն, կենդանի դիմանկարներով, անցյալի մթնոլորտի կենդանի փոխանցմամբ: Պողոս Հայթայանը զգայուն ու ջերմ սիրտ ունի ու ափսոսանքն ու կարոտը ձայնի մեջ միշտ են, շարունակվող, քաղցած ասես՝ այսօրվա անինտելեկտուալ, անդեմ, ամուլ օրերի հուշին ընդդիմացող: Նա կարոտում է Հայրենիքը՝ հոգու հայրենիքը, քաղաքը՝ 80-ականների Երեւանը: Զարմացա, որ նա Բեյրութում է ծնվել, այնքան երեւանցի էր ինձ թվում, բնիկ երեւանցի. այնքան ամուր է կապված այս քաղաքին, նրա պատմությանը, նրա արվեստի միջավայրին: Հայրենիքն իր համար այն վայրն է, որտեղ հոգեւոր կենսագրությունն է կերտվել, ձեւավորվել իր անհատականությունը, որոշակիացել սկզբունքներն ու աշխարհընկալումները. քաղաք, որի փողոցներում, սրճարաններում ու արվեստանոցներում է թողել երիտասարդության արթնացումները եւ որտեղից հիմա հավաքում է հասունության պտուղները՝ կյանքի ճշմարտությունները: Եվ բնավ անակնկալ չէր վերջերս Մ. Նահանգներից վերադարձած, ձեռքը թափ տալու պես երբ մի օր ասաց. «Մելան ջան, դա մեր տեղը չի, հայրենիքը ուրիշ բան է...»:

Հայրենիքը գնահատում է, չի գնահատում իր արժանավոր զավակներին, նշանակություն չունի: Միշտ էլ կգտնվեն նվիրյալ հոգիներ, որոնք կապրեն, կարարեն, կսիրեն ու կկարոտեն՝ անհաշվենկատ, անհավակնոտ, անմնացորդ:

*«Իր ողջ հոգով, կեցվածքով արվեստաբան է, նրա պես արվեստաբանների մասների վրա կարելի է հաշվել ոչ միայն Հայաստանում, այլեւ աշխարհում: Ինչպես է նա կարողացել արվեստի պատմությունը՝ հայ եւ համաշխարհային, յուրացնել, անցկացնել իր պրիզմայով, հետո դուրս հանել իր հոգու միջից եւ շնորհել մեզ»,* օրեր առաջ պրոֆ. Արամ Աբրահամյանի անվ. Ռուսական արվեստի թանգարանի դահլիճում, երբ նշում էին արվեստաբանի 75-ամյակը, այսպես բնութագրեց նրան գեղանկարիչ **Ֆերդինանդ Մանուկյանը**:

*«Պողոսը շատ հետաքրքրական ու կարեւոր գործ է արել՝ ոչ միայն որպես արվեստաբան: Նրան ենք պարտական Հայկական սովետական հանրագիտարանի կերպարվեստագիտության բաժնի այդպիսի կայացման համար: Նախորդները չդիմացան, - անկեղծացավ Մարտին Միքայելյանը, -ինքը դիմացավ: Կարգին մարդ է, ամբիցիաներ չունի: Դա շատ կարեւոր է: Մտածում էի՝ ո՞վ կարող էր գրել Դելակրուայի առաջաբանը՝ մեկ-երկուսը մեզանից: Բայց ճիշտը Պողոսն էր, որովհետեւ ինքը չունի ամբիցիաներ»:*

Այդ օրն էլ մտավորական նույն միջավայրն էր, մերձավոր-հոգեկից-մտակից մարդիկ էին հավաքվածները, սակավաքանակ, բայց արժեքավոր: Եղան ջերմ խոսքեր, պարգեւատրումներ, շնորհակալագրեր (Հանրային հեռուստաընկերության կողմից եւ այլ), մշակույթի նախարարությունը «Ոսկե մեդալով» պարգեւատրեց նրան: Իր խոսքը կարճ, զուսպ էր, իրեն լավագույնս բնութագրող. *«Այս մեդալը արժեքավոր եմ համարում նրանով, որ դուք այստեղ եք: Իմ ժամանակը ես ապրել եմ իսկապես անվանի նկարիչների, պոետների, ռեժիսորների, երաժիշտների միջավայրում, ովքեր մեր հոգեւոր դաշտն են ստեղծել: Բոլորին շնորհակալ եմ եւ Աստծուն եմ շնորհակալ, որովհետեւ որքանով հնարավոր էր, կարողացա ապրել Տիրոջ պատվիրաններով, որքան որ դա հնարավոր էր այս հասարակության կամ անցյալ հասարակության մեջ: Ասված տա, եկող ժամանակներում այդ պատվիրաններով ապրելու սկզբունքը դառնա համաժողովրդական»:*

Այսպես՝ ընդամենը: Կես դար արվեստին ծառայած եւ նրանով ապրող մտավորականի հայեցողական մոտեցում-քրիստոնեաբար խոնարհ, պարզ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱՐՎԵՍՏ

# Կես դար հայ պարի դեսպան՝ Ալբերտ Կիզիրյան



Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ **Ալբերտ Կիզիրյանը** 50 տարի շարունակ իրեն նվիրել է պարարվեստին: Նա պարել սկսել է յոթ տարեկանից: Հայկական պարի նկատմամբ սերը նրան տարավ այդ հիասքանչ աշխարհը: 1959-ին շնորհալի երիտասարդի պարը դիտում եւ հիանում են Հայաստանի պարի պետական անսամբլի ղեկավար Էդուարդ Մանուկյանը եւ այդ տարիներին անսամբլում պարեր բեմադրող հայտնի բալետմեյստեր Իլյա Արբատովը (ՍՍՀՄ ժող. արտիստ) ու անմիջապես Ալբերտին ընդունում անսամբլ: Շուրջ 22 տարի Ալբերտ Կիզիրյանը պարի պետականի մենապարողն էր: Մինչեւ այժմ էլ շատերի հիշողության մեջ մնացել է նրա կինտոների, կատակ, տրեխներով, կովկասյան մենապարերը, իսկ Ղանթարի շուկայում եւ էլի մի քանի տասնյակ պարեր, համարվել են անսամբլի մշտական ծրագրի հիմքը: Ալբերտի հրաշալի պարը, թռիչքներն ու ճկունությունը գնահատելով 1981-ին ՀՀ մշակույթի նախարարությունը նրան ուղեգրում է Մոսկվայի «Թատերական արվեստների պետական ինստիտուտ» (BГТС): Քննությունները գերազանց ռուսերեն հանձնելուց հետո Ալբերտը ուսանում է բալետմայստերական բաժնում՝ Ռոստիսլավ Զախարովի արվեստանոցում:

Ուսմանը զուգահեռ նա շարունակում է աշխատել պարի պետականում որպես պարուսույց անվանի բալետմայստեր Վանուշ Խանամիրյանի հետ: Այնուհետեւ Ալբերտին վստահվում է անսամբլի գեղղեկի եւ գլխավոր բալետմայստերի պաշտոնը:

Երկու տարի անց Ալբերտին հրավիրում են Ավստրալիա՝ հայկական պարի ակունքները հիմնովին ուսուցանելու եւ տեղի «Սասուն» պարախմբում պարեր բեմադրելու համար: Այդ ամենից զատ Ալբերտը մշտապես երազում էր իր անսամբլը ունենալու մասին, որը իրականացավ 1981-ին՝ «Գեղարդ» անվանումով: Եվ ահա հաջորդ տարի կլրանա անսամբլի 30-ամյակը եւ այդ հոբելյանական տարվա ընթացքում կլինեն բազմաթիվ համերգային ելույթներ Երեւանում եւ արտերկրում: «Գեղարդ» անսամբլի հաջողություններին «**Ազգը**» բազմիցս անդրադարձել է ու ներկայացրել, թե ինչպես են հայկական պարը մատուցում առանց աղավաղելու (ցավոք, այսօր շատերն են այդպես անում) դառնում էտալոն՝ ավանդական պարարվեստում: Անսամբլը աշխարհի բազմաթիվ փառատոներից, միջազգային մրցույթներից մշտապես վերադառնում է հրաշալի ավարով՝ գրան պրի, 1-ին մրցանակ, ոսկե մեդալներ ու էլի շատ պարգեւներ, հիացական նամակներ, որոնք մեծ պատիվ են բերում ամեն մի երկրի: Սակայն աշխարհով մեկ հրաշալի անուն վաստակած կուռ կոլեկտիվը մինչեւ այժմ չի գնահատվել հարազատ կառավարության կողմից ըստ արժանվույն. չունի մշտական փորձասրահ, 40 հոգանոց անսամբլի անդամները երբեւիցե չեն վարձատրվել: Հայ պարարվեստում այդքան ներդրում ունեցող «Գեղարդ» անսամբլը անգամ չի արժանացել վաստակավոր կոլեկտիվի կոչման: Հուսանք, որ հոբելյանական տարում անսամբլի նկատմամբ ուշադրությունը բարձիթողի չի լինի: Չնայած ստեղծված իրավիճակին, անվանի պարուսույցը մշտապես հրավիրվում է Սփյուռքի գրեթե բոլոր գաղթօջախներ՝ բեմադրելու հայկական պարեր: Նրա բեմադրած յուրօրինակ ազգային պարերը տասնամյակներ շարունակ ընդգրկված են ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Ավստրալիայի պարախմբերի ցանկում, ուր աշխատել է բալետմայստրը: Իսկ Տաջիկստանի «Լոլա» պետական անսամբլի հատուկ հրավերով Ալբերտ Կիզիրյանը բեմադրել է հայկական պարեր:

Հոբելյանական տարում «Գեղարդ» անսամբլը արդեն հրավերներ է ստացել Ինդոնեզիայից, Տայվանից, Չինաստանից, Ֆրանսիայից, Հունաստանից, իսկ թե որ երկիրը կմեկնեն հյուրախաղերի՝ կախված կլինի թե ով կֆինանսավորի: Ալբերտ Կիզիրյանի պես մասնագետները եզակի են: Անսամբլի մի քանի տասնյակ մրցանակները այսօր իրար վրա դարսված են պարուսույցի բնակարանում, մինչ դեռ դրանց տեղը, որոնք թանգարանային արժեքավոր նմուշներ են, պետք է լինեն հատուկ սրահում, որտեղ անսամբլը իր գործունեությունը կշարունակի թափառաշրջիկի կարգավիճակից ձերբազատվելով: Ցավոք, այսօր այնպիսի անսամբլների, պարի թատրոն կոչվածների ու հայկական պարերից կիլոմետրեր հեռու կանգնածները եւ ունեն դահլիճներ, եւ աշխատավարձ եւ մշտապես ուշադրության կենտրոնում են՝ աղավաղելով հայկական պարի ավանդույթներն ու անգամ պարաքայլերը, մարմնի շատ մասեր բացելով հանդիսատես են հավաքում: Ժամանակն է, որ լուրջ մոտեցում ցուցաբերվի ու այդ դաշտը մաքրվի, այլ ոչ թե հենց այդպիսիները գրավեն (ինչ-ինչ ճանապարհներով) արժանավորների տեղը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Մարզական

## Չեմպիոնը կորոշվի Հայաստան-Գերմանիա մրցախաղում



Շախմատի Եվրոպայի թիմային առաջնության նախավերջին տուրում Հայաստանի տղամարդկանց հավաքականը 3-1 հաշվով անչափ կարեւոր հաղթանակ տոնեց հոլանդացիների նկատմամբ եւ թիմային 13 ու բոլոր պարտիաներում վաստակած 21 միավորով գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Թիմային 13 ու բոլոր պարտիաներում վաստակած 20 միավորով 2-րդ տեղում է Գերմանիայի հավաքականը, որը 2,5-1,5 հաշվով հաղթեց ադրբեջանցիներին: Վերջիններս մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեցին՝ 12 միավորով նահանջելով 3-րդ հորիզոնական: Մրցավեճի ելքը վճռվեց առաջին խաղատախտակի վրա: Գերմանիան ներկայացնող Արկադի Նայդիչը հաղթեց Թեյմուր Ռաջաբովին:

Հայաստանի հավաքականի հաղթանակն ապահովեցին Լեւոն Արոնյանն ու Վլադիմիր Հակոբյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Անիշ Գիրիին եւ Իվան Սոկոլովին: Մովսիսյան-Վան Վելի, Սարգսյան-Սթելվագեն պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Տղամարդկանց մրցաշարում 12 միավորով 4-րդ տեղում Բուլղարիայի հավաքականն է, որը 3-1 հաշվով հաղթեց իտալացիներին: 11-ական միավոր են վաստակել Հունգարիայի, Ռումինիայի եւ Ռուսաստանի ընտրանիները: Ռումինիա-Հունգարիա մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի, ռուսները 2,5-1,5 հաշվով հաղթեցին ֆրանսիացիներին:

8-րդ տուրը հաղթական էր նաեւ մեր շախմատիստուհիների համար, որոնք 2,5-1,5 հաշվով առավելության հասան սերբերի նկատմամբ: Մեր հավաքականից հաղթանակներ տոնեցին Լիլիթ Մկրտչյանն ու Մարիա Կուրսովան՝ պարտության մատնելով համապատասխանաբար Իրինա Չելյուշկինային եւ Լիլիա Պոչեւիչին: Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց Նատաշա Բոյկովիչի հետ, իսկ Լիլիթ Գալոյանը պարտվեց Անժելա Ստոյանովիչին:

8 տուրից հետո Հայաստանի հավաքականը 10 միավորով 6-րդ տեղում է: Չեմպիոնի տիտղոսը գործնականում ապահովել են ռուսները, որոնք 3-1 հաշվով հաղթելով ֆրանսիացիներին, վաստակեցին 15 միավոր: 13 միավորով 2-րդ տեղում լեհերն են, որոնք 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին չեխերին: 12-ական միավոր ունեն Վրաստանի եւ Ուկրաինայի հավաքականները, որոնք միեւնույն 3-1 հաշվով պարտության մատնեցին համապատասխանաբար բուլղարացիներին ու հունգարացիներին:

## Քըրք Քըրքորյանը 18 մլն դոլար նվիրեց Անդրե Ագասու հիմնադրամին

**Աշխարհի ամենահարուստ հայը՝ ամերիկահայ միլիարդատեր Քըրք Քըրքորյանը 18 մլն դոլար է նվիրել աշխարհահռչակ թենիսիստ Անդրե Ագասու կրթության հիմնադրամին: Այս մասին տեղեկացնում է «Մասիս» շաբաթաթերթը՝ հղում անելով «Education Week» թերթին: Կրթության հիմնադրամի 16-ամյա պատմության մեջ սա խոշորագույն նվիրատվությունն էր: Ընդհանուր առմամբ Ագասու բարեգործական հիմնադրամը 150 մլն դոլարի նվիրատվություն է ստացել:**

**Կրթությանը մեծ նշանակություն տվող Անդրե Ագասին բարեգործական հիմնադրամի միջոցներով Լաս Վեգասի ամենաչվերահսկվող թաղամասում դպրոց է հիմնել, որտեղ երեխաները ոչ միայն ուսում են ստանում, այլեւ իրենց կարողություններն են փորձում թենիսում, յուրացնում եմ մարզաձեւի գաղտնիքները:**

**Լաս Վեգասում ծնված Անդրե Ագասին համաշխարհային թենիսի ամենավառ «աստղերից» է: Նա թենիսում բազում մրցանակների է արժանացել, երկար տարիներ գլխավորել է թենիսիստների դասակարգման համաշխարհային ցուցակը: Նրա հայրը՝ իրանահայ Էմանուել Ագասին, աշխատում էր Քըրք Քըրքորյանի խաղատներից մեկում եւ վերջինիս հետ լավ հարաբերությունների մեջ էր: Հետագայում Քըրք Քըրքորյանը դարձավ Անդրե Ագասու կնքահայրը:**

## Արթուր Աբրահամն այլեւս առաջինը չէ

**Ինչպես երեւում է, Բեռլինի Sauerland Event պրոմոութերական ընկերությունում փոխվել է բռնցքամարտիկների դասակարգման ցանկը եւ Արթուր Աբրահամն այլեւս թիվ 1 բռնցքամարտիկը չէ: Berliner Zeitung-ին տված հարցազրույցում WBO-ի վարկածով առաջին ծանրքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Մարկո Հուկը հետեւյալն է ասել. «Ներիր Արթուր, սակայն ներկայումս ես եմ թիվ 1 բռնցքամարտիկը: Դրա համար երկար ճանապարհ եմ անցել ու չեմ պատրաստվում կանգ առնել, քանի որ նվաճումների հետ մեկտեղ աճում է պատասխանատվությունը»:**

**Պրոմոութերական ընկերության գլխավոր մարզիչ Ուլի Վեգները էլ հետեւյալն է նշել. «Մեր ընկերությունում ներկայումս 4 ուժեղագույն բռնցքամարտիկներ են մարզվում՝ Հուկը, Էռնանդեսը, Հելենիուսը եւ Բրիտչը: Նրանցից որեւէ մեկին չեմ ցանկանում առանձնացնել: Հուկն ավելի կայուն է դարձել, Էռնանդեսն ու Բրիտչը շատ տաղանդավոր են, իսկ Ռոբերտ Հելենիուսը մեր հույսն է գերծանրքաշային կարգում: Նա վերջերս հաղթել է աշխարհի 3 նախկին չեմպիոնների»:**

**Իսկ Արթուր Աբրահամի մասին Վեգները հետեւյալն է ասել. «Իհարկե, Արթուրին չի կարելի մոռանալ: Նա շատ բանի է հասել նախկինում: Ցանկանում եմ, որպեսզի նրան հաջողվի հաջորդ տարի հաջողությամբ վերադառնալ միջին քաշ»:**

## Նեյմարը նախընտրեց Բրազիլիան

Բրազիլացի հարձակվող Նեյմարը մինչեւ 2014-ը երկարաձգել է պայմանագիրը բրազիլական «Սանթոսի» հետ, որտեղ տարեկան 14,4 մլն եվրո կստանա: Այսպիսով «Ռեալը», «Բարսելոնը», «Չելսին», «Մանչեսթր Յունայթեդը», «Յուվենտուսը», «Ինտերը» եւ «Անժին», որոնք հետաքրքրված էին բրազիլացի ֆուտբոլիստով, պետք է սպասեն: Բնականաբար, հետագայում Նեյմարին գնելու համար հարկ կլինի ավելի խոշոր գումար վճարել, քանի որ նրա տրանսֆերային արժեքն էլ զգալիորեն կաճի նախկին 45 մլն եվրոյի համեմատ:

19-ամյա ֆուտբոլիստը շնորհակալություն է հայտնել «Ռեալին» եւ «Բարսելոնին» հրավերի համար: Նա նշել է, որ վաղ թե ուշ յուրաքանչյուրը կյանքում վճիռ է կայացնում եւ ինքը որոշել է մնալ Բրազիլիայում ու շարունակել ելույթները «Սանթոսում»: Ակումբի նախագահ Լուիս Ալվարո Ռիբեյրոն էլ նշել է, որ Նեյմարի նոր պայմանագրի կնքման օրն իր կյանքում ամենաերջանիկն է: Մինչ այդ ամենաերջանիկ օրն այս տարվա հունիսի 22-ն էր, երբ «Սանթոսը» նվաճեց Լիբերտադորեսի գավաթը:

«Սանթոսի» հիմնական կազմում Նեյմարը նորամուտը նշել է 2,5 տարի առաջ, 17 տարեկանում: Այդ ընթացքում նա մասնակցել է 83 խաղի, խփել է 39 գոլ: 2010-ի ապրիլին Նեյմարը 6 գոլ խփեց Բրազիլիայի գավաթի մրցախաղում, որի շնորհիվ իր վրա բեւեռեց եվրոպական թիմերի մարզիչների ուշադրությունը: Առաջինն արձագանքեց անգլիական «Վեստ Հեմը», որն առաջարկել էր 12 մլն ֆունտ ստեռլինգ: Հետագայում Նեյմարով սկսեցին հետաքրքրվել «Չելսին», «Մանչեսթր Յունայթեդը», «Մանչեսթր Սիթին», «Յուվենտուսը», «Ինտերը», «Միլանը», «Բարսելոնն» ու «Ռեալը»: Նեյմարն ավելի մոտ էր Մադրիդ տեղափոխվելուն:

Նեյմարն իրեն հիանալի է դրսեւորում Բրազիլիայի ազգային հավաքականում, որում 15 խաղում 8 գոլ է խփել:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

## Տիգրան Մարտիրոսյանը բավարարվեց փոքր բրոնզե մեդալով




**Փարիզում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնությունն առայժմ անհաջող է դասավորվում հայ ծանրորդների համար: Նախորդ օրը Մելինե Դալուզյանի ձախողումից հետո մարզասերները մեդալի ակնկալիք ունեին մինչեւ 77 կգ քաշային կարգում աշխարհի գործող չեմպիոն Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանից: Ցավոք, նա էլ իր բարձրության վրա չգտնվեց՝ երկամարտի 356 կգ (166+190) արդյունքով գրավելով միայն 4-րդ տեղը:**

**Տիգրանը համեմատաբար հաջող ելույթ ունեցավ պոկում վարժությունում՝ 166 կգ արդյունքով արժանանալով փոքր բրոնզե մեդալի, որն առաջինն էր ՀՀ հավաքականի համար: Իսկ ահա հրում վարժությունում առաջին մոտեցմամբ բարձրացնելով 190 կգ, Տիգրանը ձախողվեց 200 եւ 202 կգ-անոց ծանրաձողերը բարձրացնելիս:**

**Մեկամյա ընդմիջումից հետո կրկին մրցահարթակ դուրս եկած Առաքել Միրզոյանը երկամարտի 338 կգ (155+183) արդյունքով զբաղեցրեց 10-րդ տեղը ու եւս վարկանիշային միավորներ բերեց հավաքականին:**

**Աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացավ չինացի Քիաոջին Լուն՝ 375 կգ (170+205): 2-րդ տեղը 372 կգ (166+206) արդյունքով գրավեց նրա հայրենակից Դաջին Սուն: Կորեացի Ջահեյուկ Սան 360 կգ (157+203) արդյունքով դարձավ բրոնզե մրցանակակիր:**

## Ռաֆայել Նազարյան. «Առաջատարի դերը ֆուտբոլիստներին լրացուցիչ լիցք կհաղորդի»




**Այսօր «Հանրապետական» մարզադաշտում ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրո-2013-ի ընտրական մրցաշարի հերթական խաղում կհյուրընկալի Չեխիայի ընտրանուն: Խաղի նախօրեին Հայաստանի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը ֆուտբոլի ակադեմիայում հանդիպեց լրագրողներին:**

**Գլխավոր մարզիչը նշեց, որ խաղի նախապատրաստությունն ընթանում է բնականոն հունով, տղաները ջանասիրաբար են մարզվում, բոլորը պատրաստ են հանդիպմանը եւ ոչ մի հուզող հարց չկա: Ընդհանուր առմամբ Ռաֆայել Նազարյանը գոհ է նաեւ լեգեոնականների՝ Արտակ Ալեքսանյանի եւ Մասիս Ոսկանյանի մարզավիճակից, Գեւորգ Ղազարյանի մարզավիճակն էլ բավարար գնահատեց: Ինչ վերաբերում է Արագ Օզբիլիսին, ապա նա դեռեւս լիովին չի ապաքինվել վնասվածքից, ուստի որոշեցին չհրավիրել հավաքի:**

**Ռաֆայել Նազարյանը գտնում է, որ թեեւ մրցաշրջանը մոտենում է ավարտին, սակայն ֆուտբոլիստների մոտ հոգնածություն չի զգացվում, նրանք ֆիզիկապես լավ վիճակում են: Ըստ մարզչի, մեր հավաքականի համար ավելի լավ է խաղալ նոյեմբերին, քան մարտին: Ֆուտբոլիստները հոգեբանորեն էլ պատրաստ են առաջիկա հանդիպումներին, որոնցում անհրաժեշտ է հաղթել:**

**Ռաֆայել Նազարյանն այժմ էլ Չեխիայի հավաքականին համարում է խմբի ֆավորիտը, սակայն չի կարծում, թե ֆավորիտները մշտապես հաղթում են: Չեխերի հետ արտագնա հանդիպումը, որն ավարտվեց 1-1 հաշվով, ցույց տվեց, որ մեր ֆուտբոլիստները կարող են մրցակցին հաղթել: Առաջին խաղի համեմատ չեխերի կազմում 2 փոփոխություն է կատարվել, որոնք հանդես են եկել Ուելսի հետ մրցավեճում: Մյուսների խաղային հնարավորություններին Նազարյանը լավ ծանոթ է: Ըստ նրա, Չեխիայի ընտրանին բավականին կարգապահ, մոբիլ թիմ է, որն արագ ֆուտբոլ է խաղում: Ամեն դեպքում պետք է ձգտել դրական արդյունքի հասնել:**

**Ռաֆայել Նազարյանը չի կիսում չեխերի մարզչի այն տեսակետը, թե առաջիկա հանդիպումը վճռորոշ է լինելու: Ըստ նրա, մեզ համար մնացած 4 հանդիպումներից յուրաքանչյուրն էլ կարեւոր նշանակություն ունի եւ պետք է քայլ առ քայլ հաղթահարել արգելքները: Գլխավոր մարզիչը համամիտ է ՀՖՖ նախագահի այն պահանջի հետ, որ ընտրական այս մրցաշարը հարկավոր է ավարտել 1-ին տեղում: Նա հավաստիացրեց, որ ամեն ինչ կարվի այդ խնդիրն իրագործելու համար: Ներկայումս մեր հավաքականը գլխավորում է ընտրական 3-րդ խմբի աղյուսակը, ինչը պետք է լրացուցիչ լիցք հաղորդի մեր ֆուտբոլիստներին:**

**Ռաֆայել Նազարյանը համաձայնեց այն տեսակետի հետ, որ երիտասարդական հավաքականն ընկերական հանդիպումներ շատ քիչ է անցկացնում ու պետք է նման խաղեր կազմակերպել: Այժմ ֆեդերացիայի հետ այդ հարցով աշխատանքներ են տարվում: Ինչ վերաբերում է «Համագործակցության գավաթի» մրցաշարին երիտասարդական հավաքականի հնարավոր մասնակցությանը, ապա գլխավոր մարզիչը դա նպատակահարմար չի գտնում: Թեեւ դեռեւս հստակ որոշված չէ, թե այս տարվա մրցաշարն ինչպիսի մրցակարգով է անցկացվելու:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# 800 հազար օսմանյան ոսկեդրամ...

*1-ին էջից*

«Էլյազիգցի գործարար Սաիդ Ալի Բայրաքը տարիներ շարունակ պայքարում է, որ շվեյցարական բանկից ստանա հորից ժառանգած 800 հազար օսմանյան ոսկեդրամը: Թուրքիայում Շվեյցարիայի դեսպան Ռայմոնդ Կունցը, ստացած հրավերին համապատասխան, Էլյազիգում հանդիպել էր Բայրաքի հետ եւ քննարկել ոսկիների ճակատագիրը:

Մի՞թե այս պատմությունը չափից դուրս տարօրինակ չէ: Մի կողմ թողած այն հարցը, թե 6 տոննա կշռող այս ոսկիները ինչպես են փոխադրվել Շվեյցարիա, ուզում եմ հարցնել. «Ո՞րն է 800 հազար օսմանյան ոսկիների աղբյուրը»:

Էլյազիգցի քաղաքացու հանգուցյալ հայրը «Նացիստական ոսկիները որպես ավանդ ընդունող Շվեյցարիան կընդունի նաեւ իմ ոսկիները» տրամաբանությամբ դրանք հանձնել է բանկ: Սակայն չկասկածենք, որ այդպիսի ոչ մի առիթ բաց չթողնող հայկական լոբբին արդեն լուսարձակի տակ վերցրած պետք է լինի շվեյցարական բանկերում պահվող «աղբյուրն անհայտ» Էլյազիգի ոսկիները:

Հոկտեմբերի վերջերին Էլյազիգում բնակվող մեր քաղաքացին հայտարարելով իր հոր ունեցած 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին, իսկույն հայտնվել էր օրակարգում: Ավելին, Շվեյցարիայի դեսպանն այցելել էր նրան, նույնիսկ ոսկիների վերադարձման համար միջամտել էր վարչապետ Էրդողանը:

Ըստ մեր քաղաքացու, նրա հայրը 1980-ի սեպտեմբերի 12-ի հեղաշրջման նախօրեին 6 տոննա կշռող այս ոսկիները ցամաքային ու ծովային ճանապարհներով հասցրել էր Շվեյցարիա: Նշեմ, որ 800 հազար օսմանյան ոսկու արժեքը ներկայումս 4 մլրդ լիրա է կազմում (մոտ 3,5 մլրդ դոլար):

Հենց թերթում կարդացի ոսկիների մասին, զգացի, որ այստեղ տարօրինակ բան կա: Մեկը 800 հազար օսմանյան ոսկեդրամ ունենա, առանց Թուրքիայում կամ արտասահմանում ներդրում կատարելու պահի մինչեւ 1980 թ., ապա նախապես «իրազեկվի» սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման մասին եւ հեղաշրջումից մի քանի օր առաջ դուրս հանի Թուրքիայից:

Որքան ինձ հայտնի է, Թուրքիայի Հանրապետության առաջին շրջանում ոչ որ «առձեռն» այդպիսի գումար չի ունեցել: 1924-ին հիմնադրված IS բանկի կապիտալը 250 հազար լիրա է, իսկ անգլիացիները Մոսուլից հրաժարվելու համար 1926-ին 500 հազար լիրա էին առաջակել Թուրքիային, որը չընդունվեց: Այսինքն խնդրո առարկա գումարը պետությունից գաղտնի տարիներ շարունակ պահելն անգամ ինքնին մեծ խնդիր է:

Մեր քաղաքացու վկայությամբ, նրա հայրը 6 տոննա կշռող ոսկե դրամները թաքցրել է «իրենց տան տակ փորած փոսում»: Եթե այս գումարը վերջինը վաստակել է շնորհիվ առեւտրի, ապա հանրապետության շրջանում օսմանյան ոսկեդրամով ինչպե՞ս է առեւտուր արել: Ինչո՞ւ այսքան մեծ ծավալի առեւտրի դիմաց չի հայտնվել հարկատուների ցուցակում: Ինչո՞ւ է թաքցրել գումարը կամ ինչո՞ւ չի փոխանակել, չի դրել թուրքական բանկում, ներդրում չի արել եւ գործարան չի կառուցել: Գուցե այս ոսկեդրամների աղբյուրն իսկապես խնդրահարույց է:

Երբ մեր քաղաքացու հանգուցյալ հայրը մտածում էր «Նացիստական ոսկիները պահող Շվեյցարիան կպահի նաեւ իմ ոսկիները», մի՞թե չգիտեր, որ այդ ոսկիները հրեաներին էր պատկանում, այլ ոչ թե նացիստներին: Միլիոնավոր մարդկանց համակենտրոնացման ճամբարներում ոչնչացնող նացիստներն առգրավել էին իրենց զոհերի ունեցվածքը եւ հատուկ հետաքրքրություն ցուցաբերել ոսկիների նկատմամբ: Ի դեպ, 90-ականներին նացիստների առգրաված ոսկիների շվեյցարական բանկերում պահպանման շուրջը քաղաքական փոթորիկ էր բարձրացել: Այդ ոսկիների հետ կապված շվեյցարական բանկերը ստիպված էին ֆինանսական որոշ գաղտնիքներ հայտնել ԱՄՆ-ին ու Անգլիային: «Հոլոքոստի զոհերի» անունը կրող բազմաթիվ կազմակերպություններ ընկել են այս ոսկիների հետեւից: Առեղծվածն առ այսօր չի բացահայտվել: Դեռ դատավարություններն էլ շարունակվում են:

Ահա թե ինչո՞ւ էին զարմացել, կարդալով 800 հազար օսմանյան ոսկեդրամի մասին: Եթե այդ ոսկիները շվեյցարական բանկերում դրվել են «նացիստական ոսկիների» օրինակով, ապա այս գումարի աղբյուրն անհայտ լինելու առումով պետք է տեղիք տա լուրջ մտահոգության: Թալեաթ փաշան «Գաղտնի թղթածրարում» 1915-ին Մամուրաթուլազիզից (Էլյազիգ) տեղահանված հայերի թիվը 70 հազար է նշում: Այդ հայերից ոչ մեկն այլեւս Էլյազիգ չվերադարձավ: Տեղահանվել են նաեւ քաղաքի ունեւոր հայ ընտանիքները: Գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիք «տեղահանությունից հետո վերադառնալու» հույսով փոխանակ ունեցած ոսկին իր հետ վեցնելու, թողել է մահմեդական վստահելի հարեւանի մոտ կամ թաղել ապահով մի տեղ, ինչի մասին տարիներ շարունակ բերնեբերան պատմում են: Այդպիսի պատմություններ պատմում են նաեւ Արեւելյան Անատոլիայի այլ քաղաքներում: Ավելին, ԱՄՆ-ի քաղաքացի բազմաթիվ հայեր իրենց պապերի թաղած ոսկիները գտնելու նպատակով հաճախ են այցելում այս շրջանները:

2015-ին լրանում է այսպես կոչված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Հայերը կարեւոր նշանակություն են տալիս այդ տարելիցին: Կասկածից վեր է, որ այդ առումով որեւէ առիթ բաց չթողնող հայկական լոբբին արդեն լուսարձակի տակ վերցրած պետք է լինի «աղբյուրն անհայտ» այս ոսկիները: Էլ չենք խոսում շվեյցարական Credit Suisse բանկի մասին, որը հայտարարում է. «Ոսկիները խնդրահարույց են: Խարդախության հոտ է փչում»: Հետեւաբար չի կարելի վարչապետին խառնել այսպիսի մութ գործերի մեջ, որի ծայրը քիչ թե շատ հայտնի է, թե ո՞ւր է տանելու: Առավել եւս չի կարելի վարչապետին դնել այնպիսի իրավիճակում, որ նա հայտնվի «աղբյուրն անհայտ» գումարի հետեւից ընկնողի կարգավիճակում, ինչը, հեղինակության առումով, Թուրքիայի համար կարող է լուրջ խնդիր դառնալ առաջիկայում»:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Նպատակը | Հողի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | | | |
| 1 | Չնքուշի փողոց h.6/2 | ոչ բնակելի տարածք | 253.1 | 410 | 3,200,000 |
| 2 | Ղ.Փարպեցի 13շ., 21 տարածք | ոչ բնակելի տարածք | | 41.8 | 2,500,000 |
| 3 | Նալբանդյան 116շ., 53 տարածք | ոչ բնակելի տարածք | | 22.1 | 2,500,000 |
| 4 | Մաշտոցի պողոտա 5գ շենք, 30 տարածք | ոչ բնակելի տարածք | | 102.3 | 5,700,000 |
| *Կրկնաճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | | | |
| 1 | Բաշինջաղյան փող.h.185/1 | կաթսայատուն | 321.07 | 270.4 | 14,000,000 |
| 2 | Միկոյան փող., 15/2 | կաթսայատուն | 311.24 | 282.00 | 15,400,000 |
| 3 | Գալշոյան 19/1 | կաթսայատուն | 159.96 | 137.40 | 12,700,000 |
| 4 | Աթոյան անց., h11/2 | կաթսայատուն | 436 | 436 | 25,800,000 |
| 5 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 164 | 164 | 11,000,000 |
| 6 | Ճառագայթային փող., 136/1 | կաթսայատուն | 316 | 283 | 22,700,000 |
| 7 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 159 | 159 | 8,800,000 |
| 8 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254 | 237 | 26,600,000 |
| 9 | Շիրակի 56 | կաթսայատուն | 255 | 229 | 8,100,000 |
| 10 | Ավետիսյան փող., 51/1 | կաթսայատուն | 285 | 321 | 15,600,000 |
| 11 | Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4 | կաթսայատուն | 241 | 210 | 10,200,000 |
| 12 | Վիլնյուսի փող., 113/4 | կաթսայատուն | 241 | 212 | 8,400,000 |
| 13 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 243 | 213 | 8,400,000 |
| 14 | Կաթսայատուն, Արծունու փող. 16/2 | կաթսայատուն | 138.0 | 115.7 | 8,600,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2011թ նոյեմբերի 25-ին ժ.16.00-ին, ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչեւ 2011թ նոյեմբերի 28-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ՆՅՈՒ ՅՈՐՔ

# Պաղեստինը` ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկմանը սպասելիս

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի փորձագիտական հանձնաժողովում Պաղեստինի հարցի քննարկման դժվարություններն ու բարդությունները մեկնաբանությունների տեղիք են տալիս ոչ միայն Անվտանգության խորհրդի անդամ երկրների դիրքորոշումների ու շահերի կտրվածքով, այլեւ հենց Պաղեստինի մոտեցումների վերանայման տեսանկյունից: «Ասիշիեյթիդ պրես»-ի անանուն պաղեստինյան աղբյուրները հայտնել են, թե Պաղեստինի իշխանությունները հույսը կտրել են ՄԱԿ-ին անդամակցելուց, իբր համակերպվելով այն իրավիճակին, որ Պաղեստինին չի հաջողվի դառնալ ՄԱԿ-ի լիիրավ անդամ:

Ուստի, նույն անանուն աղբյուրների վկայությամբ, Պաղեստինն անցնելու է պահեստային տարբերակին, որպիսին ՄԱԿ-ում դիտորդի բարելավված կարգավիճակի ստացումն է, որի միջոցով էլ Պաղեստինի համար մատչելի կդառնան միջազգային հիմնական կազմակերպությունները:

Այսպիսի հրապարակման տարածման առիթ է դարձել այն, որ նոյեմբերի 8-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կից փորձագիտական հանձնաժողովը այդպես էլ կոնսենսուս չապահովեց Պաղեստինի կարգավիճակի առնչությամբ: «Ռոյթեր» գործակալության տարածած սեւագիր փաստաթղթի համաձայն, չորսէջանոց փաստաթղթում ասվում է, թե հանձնաժողովը չի կարողացել միաձայն հանձնարարականներ պատրաստել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ներկայացնելու համար` Պաղեստինի ճանաչման առնչությամբ:

Ըստ փաստաթղթի ոչ պաշտոնական հրապարակման, Անվտանգության խորհրդի անդամ երկրների ներկայացուցիչները Պաղեստինի նկատմամբ դիրքորոշմամբ բաժանվել են մի քանի խմբի, սակայն մանրամասներ, թե որ երկիրն է աջակցություն հայտնել Պաղեստինի ճանաչմանը, իսկ որը` դեմ, չի հայտնվում: Ամեն դեպքում, այդ փաստաթուղթը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կներկայացվի այսօր, թեեւ մինչ այդ կարող են փոփոխություններ արվել: Եվ եթե հաշվի առնենք, որ այս տարաձայնություններին, որպես իրողություն, կարելի է գումարել առնվազն ԱՄՆ կոշտ դիրքորոշումը, ավելի ճիշտ` հակազդեցությունը Պաղեստինի ճանաչման գործընթացին, ապա դժվար թե Անվտանգության խորհրդում դրական արդյունք գրանցվի:

Այդուհանդերձ, հիշեցնենք, որ Պաղեստինն արդեն իսկ դարձել է ՄԱԿ-ի կառույցներից մեկի` ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ, ինչն էլ պատճառ է դիտվել մի շարք երկրների կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ին հատկացվող ֆինանսավորումը դադարեցնելու համար, մասնավորապես` ԱՄՆ-ի, Կանադայի, Իսրայելի:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-07 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 7-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը` ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-07***

Պատվիրատուն` ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է ք. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքային համալիրի կառույցների վերականգնման եւ ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանքային համալիրի կառույցների վերականգնման եւ ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման աշխատանքների ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2011 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է` պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց` օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն` ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում` 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով` նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների` պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, Հեռ. 58 51 78***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա Ն 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 10.11.2011, գինը` 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: